2026, ՀՈՒՆԻՍ Ա, ԹԻՎ 11 (703)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Տոնախմբվեց Սուրբ Հռիփսիմյանց կույսերի հիշատակը

Հունիսի 1-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սուրբ Հռիփսիմյանց կույսերի հիշատակը:

Տոնական այդ օրը նաև Սուրբ Հռիփսիմե վանքի ուխտի օրն է:

Առավոտյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկեղեցականների թափորը ուխտավոր հավատացյալների ուղեկցությամբ շարժվեց դեպի Սուրբ Հռիփսիմե վանք՝ տանելով Սուրբ Հռիփսիմե կույսի մասունքակիր Աջը: Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամարի առջև Ամենայն Հայոց Հայրապետը սրբազան մասունքով օրհնեց հոգևոր դասին և ներկա բարեպաշտ ժողովրդին՝ այն փոխանցելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Ծատուրյանին:

Բերկրառատ տոնի առիթով Սուրբ Հռիփսիմե վանքում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի փոխլուսարարապետ Հոգեշնորհ Տ. Դավիթ աբեղա Օհանյանը:

Օրվա խորհրդի մասին քարոզեց Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանը՝ անդրադառնալով տոնի խորհրդին և Հռիփսիմյանց կույսերի նահատակության պատմությանը: «Սուրբ կույսերը մերժեցին կռապաշտությունը և չուրացան իրենց հավատքը, հատկապես Հռիփսիմեն, որին խոստացվեց մինչև թագուհու պաշտոն, հարստություն, սակայն նա այս ամենի փոխարեն ընտրեց Քրիստոսի սերը: Սուրբ կույսը մերժեց թագավորի կամքը, որի համար և նահատակվեց»,— ասաց Հայկազուն Սրբազանը՝ ընդգծելով, որ Հռիփսիմյանց կույսերի մարտիրոսությունը հետագա դարերում քրիստոնյաների համար դարձավ առ Աստված նվիրումի և անձնազոհության օրինակ:

Հայկազուն արքեպիսկոպոսը նկատեց նաև, որ Հռիփսիմյանց կույսերի տոնակատարությունը պարզապես պատմության հիշատակում չէ, այլև վերահաստատումն է մեր հավատքի՝ որպես սուրբ կույսերի հետևորդների, ինչպես առաքյալները՝ Քրիստոսի, և քրիստոնեությունը միայն գրքերում արձանագրված աստվածաբանություն չէ, այլև ամեն օր ապրվող իրականություն: Պատարագի ավարտին, հանդիսապետությամբ Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանի, սրբուհու մասունքակիր Աջով կատարվեց Անդաստանի կարգ:

## Տոնախմբվեց Սուրբ Գայանյանց կույսերի հիշատակը

Հունիսի 2-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սուրբ Գայանյանց կույսերի հիշատակը:

Բերկրառատ տոնի առիթով առավոտյան Վեհարանից եկեղեցականների հանդիսավոր թափորն առաջնորդվեց դեպի Սուրբ Գայանե վանք՝ տանելով Սուրբ Գայանե կույսի մասունքակիր Աջը:

Թափորը մինչև Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամար գլխավորեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ սրբազան մասունքով օրհնելով բարեպաշտ ժողովրդին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը մասունքակիր Աջը փոխանցեց Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանին:

Օրվա խորհրդի կապակցությամբ Սուրբ Գայանե վանքում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ:

Պատարագիչն էր Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Ծատուրյանը: Իր քարոզում Սրբազան Հայրը, անդրադառնալով Սուրբ Գայանյանց կույսերի վարքին ու նահատակության խորհրդին, ընդգծեց. «Սուրբ կույսերը Հայաստան եկան՝ իրենց մաքրության լույսով ցրելու կռապաշտության խավարը: Իսկ այսօր մենք՝ այս հողի վրա ապրողներս, կոչված ենք մեր հավատարմությամբ և հաստատակամությամբ փարատելու հուսահատության, վախի ու անորոշության խավարը մեր միջից:

Սիրելիներ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր ևս բացել է վանական կյանքի դռները հավատարիմ ու կոչման գիտակցությունն ունեցող շատ ու շատ անձանց առջև՝ վերափոխելու իրենց կյանքն ու նմանվելու այսօրվա հիշատակելի սրբերին և իրենց աղոթքներով մշտամնա օրհնություն իջեցնելու հայոց հողի վրա»,— նշեց Անանիա Սրբազանը՝ հավելելով, որ հավատարմությունը մարդուն զորացնող մարդկային կյանքի հիմնարար բարոյահոգևոր արժեքներից է՝ անշեղ մնալու ճշմարտության, բարու և իր ընտրած ճանապարհի մեջ:

Պատարագի սրբազան արարողության ավարտին Սուրբ Գայանե վանքի բակում, հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանի, սրբուհու մասունքակիր Աջով կատարվեց հավատացյալների օրհնություն և Անդաստանի կարգ:

## Սուրբ Հովհաննես Մկրտչի և Աթանագինե եպիսկոպոսի մասունքները տարվել են Շողակաթի վանք

Հունիսի 4-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Հովհաննես Կարապետի և Սուրբ Աթանագինե եպիսկոպոսի տոնը, որը նաև Վաղարշապատի Սուրբ Շողակաթ վանքի ուխտի օրն է:

Սուրբ Հովհաննես Մկրտչի և Աթանագինե եպիսկոպոսի մասունքներն ամփոփող խաչ-մասունքարանն առավոտյան Մայր Աթոռից Սուրբ Շողակաթ վանք տարվեց եկեղեցականների հանդիսավոր թափորով:

Թափորը մինչև Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամար գլխավորեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մասունքարանով օրհնելով բարեպաշտ ժողովրդին:

Այնուհետև սրբազան մասունքները Նորին Սրբությունը փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Ծատուրյանին:

Տոնի կապակցությամբ վանքում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Սուրբ Շողակաթ վանքի վանահայր Հոգեշնորհ Տ. Արիս աբեղա Տոնոյանը:

Սուրբ Պատարագի ավարտին Սուրբ Շողակաթ վանքի բակում Մայր Աթոռի Քարոզչական կենտրոնի տնօրեն Գերաշնորհ Տ. Զաքարիա եպիսկոպոս Բաղումյանի հանդիսապետությամբ Սուրբ Հովհաննես Մկրտչի և Աթանագինե եպիսկոպոսի մասունքներն ամփոփող խաչ-մասունքարանով կատարվեց Անդաստանի կարգ:

# Նշվեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը

Հունիսի 7-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը:

Նվիրական օրվա առիթով Միածնաէջ Մայր Տաճարում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քարոզչական կենտրոնի տնօրեն Գերաշնորհ Տ. Զաքարիա եպիսկոպոս Բաղումյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբանությունը և բազմաթիվ ուխտավորներ:

Պատարագիչ Սրբազան Հայրը, իր քարոզում անդրադառնալով Սուրբ Էջմիածնի խորհրդին, նշեց. «Դարերի հոլովույթում Մայր Տաճարը քարեղեն շինությունից վերածվել է առաքելության, աննկուն ոգու և զորեղ կամքի՝ առաջնորդելով մեր ազգին պատմության քառուղիներում: Մեր նախնիներն այս տաճարն ընկալել են որպես միասնության խորհրդանիշ, ազգահավաքի կենդանի աղբյուր և ապրել հայոց պետականության վերականգնման, պահպանման և զորացման քաղցր երազով: Այն ոչ միայն աղոթավայր է, այլև մեր հիշողության պահոցը՝ ապահովելով մեր «փոքր ածու»-ի ազգային կենսունակությունն ու շարունակականությունը: Ս. Էջմիածինը նաև համայն հայության տունն է, իսկ Էջմիածնասիրությունը՝ հայրենանվիրումի և աստվածսիրության վառ օրինակ:

....Համբուրելի այս անունը սիրելի է մեզ համար, որովհետև աստվածապարգև Էջմիածինը մենք ենք: Երբ հեռացել ենք Ս. Էջմիածնի խորհրդից, խարխափել ենք խավարում, հեռացել մեր արմատներից, լուսավորչական ուղղափառ հավատքից և ծնկել բազում դժվարությունների առաջ: Բայց երբ վերագտել ենք Ս. Էջմիածինը, պայծառակերպվել, լուսավորվել և ավելի հայացել:

Օրհասական պահերին համախմբվել ենք հենց Ս. Էջմիածնի շուրջ այն հաստատ համոզմամբ, որ քանի դեռ կանգուն է մեր հավատքի խորանը, կանգուն կլինի նաև ազգս հայոց: Հետևաբար Ս. Էջմիածնի տոնը պարզապես պատմական մի դեպքի հիշատակություն չէ, այլև համազգային և անձնական կոչ՝ վերանորոգելու մեր կյանքը, հավատը, ինքնաճանաչվելու, ամուր կառչելու մեր ինքնությանը, որպեսզի չկորչենք փոփոխական և մարտահրավերներով լի այս աշխարհում»:

Սուրբ Պատարագի ավարտին Մայր Տաճարի Սուրբ Իջման Խորանի առջև, Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, կատարվեց Հայրապետական մաղթանք: Ներկա հավատացյալ ժողովուրդը և եկեղեցականաց դասը աղոթք բարձրացրին առ Աստված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության, շենության և հավետ պայծառության համար:

## Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Մովսես վարդապետ Սարգսյանը ծառայության է նշանակվել Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի հայոց թեմում:

Հոգեշնորհ Տ. Սեպուհ աբեղա Ասատրյանը և Արժանապատիվ Տ. Մեսրոպ քահանա Օհանյանը ծառայության են կոչվել Ֆրանսիայի հայոց թեմում:

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*Հունիսի 2-ին* **Դանիայի Ավետարանական Լյութերական Եկեղեցու ուխտավորներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Դանիայի Ավետարանական Լյութերական Եկեղեցու շուրջ 30 հոգևորականների և ուխտավորների:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց ներկաներին՝ ընդգծելով, որ նման այցելությունները պատեհ առիթ են փոխճանաչողության, հոգևոր հաղորդակցության և եղբայրական կապերի ամրապնդման համար:

Իր խոսքում Հայոց Հայրապետն անդրադարձավ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական առաքելությանը հայ ժողովրդի կյանքում՝ մասնավորապես ընդգծելով Եկեղեցու դերակատարությունը քրիստոնեական հավատքի զորացման, հոգևոր ու մշակութային ժառանգության կերտման և ազգային ինքնության պահպանության գործում:

Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց նաև հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին՝ գոհունակություն հայտնելով քույր Եկեղեցիներին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդին, Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսին, ինչպես նաև տարբեր միջեկեղեցական և կրոնական կառույցների՝ դժվարին ժամանակներում հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն ցուցաբերվող զորակցության համար:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը պատասխանեց նաև հյուրերի հարցերին, որոնք վերաբերում էին Եկեղեցի–պետություն հարաբերություններին, Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերների հաղթահարմանն ու Հայ և Ընդհանրական Եկեղեցու առաքելության առավել արդյունավետ իրագործմանը արդի ժամանակներում:

*Հունիսի 3-ին* **Արցախահայության ներկայացուցիչներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց արցախահայության ներկայացուցիչներին:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց բռնի տեղահանված արցախահայերի առջև ծառացած հիմնախնդիրներին, նրանց հոգևոր խնամքին և սոցիալական կարիքներին, ինչպես նաև արցախահայության արդար իրավունքների և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պաշտպանությանն առնչվող հարցերին:

*Հունիսի 5-ին* **«Մարդու իրավունքների և ցեղասպանագիտության կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Մարդու իրավունքների և Ցեղասպանագիտության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներին:

Հանդիպման ընթացքում կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը Նորին Սրբությանը ներկայացրեց կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները, իրականացվող գիտակրթական ծրագրերը և առաջիկա նախաձեռնությունները: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ներկաներին՝ ցեղասպանագիտության ոլորտում իրականացվող գիտական, կրթական և հանրային իրազեկման աշխատանքների համար:

➥ էջ 3

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

## «Մարդու իրավունքների և ֆեղասպանագիտության կենտրոն» ՀԿ ներկայացուցիչներին

↩ էջ 2

Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայաստանում և Սփյուռքում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղությամբ Եկեղեցու նախաձեռնություններին՝ ընդգծելով ցեղասպանությունների ճանաչման և դատապարտման կարևորությունը ժողովուրդների իրավունքների պաշտպանության ու մարդկության դեմ գործված ոճրագործությունների կանխարգելման գործում:

Հանդիպմանը խոսվեց Արցախի հայաթափման, արցախահայության հիմնարար իրավունքների ոտնահարման և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության նկատմամբ շարունակվող ոտնձգությունների մասին: Ընդգծվեց, որ տեղի ունեցածը հայ ժողովրդի դեմ իրականացված հերթական ցեղասպան գործողությունն է, ինչը վկայում է, որ մարդկության դեմ ոճրագործությունների անպատժելիությունն ու դրանց ոչ համարժեք դատապարտումը շարունակում են ծնել նոր ողբերգություններ:

Զրույցի ընթացքում քննարկվեց նաև ցեղասպանագիտության ոլորտում կրթական նախաձեռնություններին հոգևորականների մասնագիտական ներգրավվածության մասին:

*Հունիսի 12-ին* **Գերմանիայի եպիսկոպոսաց համաժողովի Բարեգործական հարցերի հանձնաժողովի և «Կարիտաս Գերմանիա» կազմակերպության պատվիրակությանը**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի եպիսկոպոսաց համաժողովի Բարեգործական հարցերի հանձնաժողովի և «Կարիտաս Գերմանիա» կազմակերպության պատվիրակությանը՝ գլխավորությամբ Գերմանիայի եպիսկոպոսաց համաժողովի Բարեգործական հարցերի հանձնաժողովի նախագահ, Ֆրայբուրգի արքեպիսկոպոս Շտեֆան Բուրգերի:

**Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի**

# *Նադաբ և Աբիուդ.* մեղավորնե՞ր, թե՞ մեծագույն մարդիկ

Նադաբի և Աբիուդի պատմությունը սուրբգրային ամենախորթին և հակասական դրվագներից է: Երկու քահանաները, որոնք ընտրված էին ծառայելու Վկայության խորանում, հանկարծամահ են լինում հենց Տիրոջ առաջ: Հարց է առաջանում, թե ինչո՞ւ է պատիժն այսքան կտրուկ և ինչո՞ւ հենց կրակով: Պատմությունն այս դեպքում լուռ է ոչ միայն իր բովանդակությամբ, այլև իր հերոսներով: Քահանաների հայրը՝ Ահարոնը, լռում է, իսկ Մովսեսը ոչ թե սգում է, այլ եղբորն ուղղված մխիթարիչ խոսքերով պարզաբանում տեղի ունեցածը: Այս հակադրությունն էլ ավելի է խորացնում այն հարցը, թե արդյոք Նադաբն ու Աբիուդը սուրբգրային պատմության մեջ հերթական մեղավորներ են, թե՞ նրանց արարքի մեջ կար արտառոց մի բան, որն առանձնացնում է նրանց մնացյալ կերպարներից: Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն վերջիններիս արարքը, այլև հոգևոր այն միջավայրը, որտեղ տեղի ունեցավ այդ ամենը:

Նադաբն ու Աբիուդը Ահարոնի ավագ որդիներին էին, Նադաբն անդրանիկն էր (Թվեր 3:2): Առաջինի անունը եբրայերենում ունի հետևյալ իմաստները՝ «պատրաստակամ», «առատաձեռն», «ազնիվ», իսկ երկրորդինը՝ «փառքի հայր» կամ «իմ հայրը փառք է»: Վերջիններս սրբագործված էին քահանայագործելու համար, սակայն Սինայի անապատում օտար կրակ մատուցեցին Տիրոջը և քանի որ «զավակներ չունեին, իրենց հոր՝ Ահարոնի հետ քահանայագործեցին Եղիազարն ու Իթամարը» (Թվեր 3:4):

Հրեական շաբաթական ընթերցումների շարքում հետաքրքրական այս հատվածը զետեղված է Շմինի խմբում (Ղևտ. 9:1–11:47), որի համապատասխան զույգը, հրեա մեկնիչների բացատրությամբ, Կի-տիսա խումբն է ելից գրքում (30:11–34:35): Երկուսի դեպքում էլ ականատես ենք լինում հոգևոր մեծագույն ճգնաժամի, երբ քահանաները չեն կատարում Մովսեսի հրահանգները: Ահարոնի և նրա որդիների օծումից հետո Մովսեսը կարգադրել էր. «Վկայության խորանի դռնից յոթ օր դուրս չեք գա, մինչև ձեր նվիրագործման օրերի լրումը, որովհետև Տերը յոթ օրում պետք է սրբագործի ձեզ» (Ղևտ. 8:33): Մովսեսը քահանաներին ուղղած իր խոսքում մշտապես կրկնում է հետևյալ արտահայտությունը. «Այդպես է ինձ պատվիրել Տերը»: Այս ամենից որոշ մեկնիչներ եզրակացնում են՝ քահանաներն ունեցել են դժգոհություններ, որ փաստվում է Ղևտ. 8:36 համարով. «Ահարոնն ու նրա որդիներն արեցին» (եբրայերեն բնագրում «արեցին»-ի փոխարեն «արեց» է), այսինքն՝ Մովսեսի հրահանգները, «ինչ որ Տերը պատվիրել էր», հոժարությամբ կատարեց միայն Ահարոնը: Հասկանալի է, որ ինչպես ոսկե հորթի պարագայում Ահարոնը, այս դեպքում քահանաները ևս ինքնուրույն գործելու հակումներ են դրսևորում՝ առանց համաձայնեցնելու իրենց գործողությունները Մովսեսի հետ: Ահա նախևառաջ այս տրամաբանությամբ է անհրաժեշտ դիտարկել Նադաբի և Աբիուդի գործողությունները:

**Նադաբի և Աբիուդի արարքը:** Վկայության խորանի կառուցումը հոգևոր մեծ վերելք հաղորդեց ամբողջ հրեա ազգին՝ դառնալով օրհնության նվիրական աղբյուր: Սա եղավ՝ շնորհիվ ժողովրդի և Աստծո միջև վերականգնված կապի, որն առավել խզվել էր ոսկե հորթի ստեղծման պատճառով: Ղևտ. 9-րդ գլխում, որտեղ խոսվում է քահանայության համար մատուցվող անդրանիկ զոհաբերությունների մասին, նշվում է, որ Տիրոջ փառքը երևում է ժողովրդին, և «Տիրոջ կողմից կրակ եկավ ու կերավ այն ամենը, ինչ որ կար զոհասեղանի վրա՝ ողջակեզն ու ճարպը: Ողջ ժողովուրդը տեսավ այդ, սարսափեց, ու բոլորն ընկան երեսնիվայր» (9:24): Երկնքից իջած կրակը վկայում է ժողովրդի անձնուրաց աշխատանքը՝ Բարձրյալի համար ստեղծելու այնպիսի «բնակավայր», որի շնորհիվ աստվածային ներկայությունը մշտապես կբնակվեր հրեա ժողովրդի մեջ: Իրավիճակը, սակայն, անսպասելիորեն վերափոխվում է Ահարոնի սերնդի երկու ականավոր դեմքերի՝ Նադաբի և Աբիուդի մահվան պատճառով: Այս ողբերգությունը ժողովրդին բացահայտեց Վկայության խորանի ևս մեկ առանձնահատկություն. գտնվել այն վայրում, որտեղ աստվածային ներկայությունն է, և պահանջում է զգոնության և պատասխանատվության մեծագույն զգացում:

Սուրբ Գրքի առաջին իսկ էջերից ականատես ենք լինում զոհաբերությանն առնչվող բազմապիսի դրվագների, հետագայում նաև զոհաբերության առանձին տեսակների ու դրանց կատարման ձևերի ի հայտ գալուն: Նկատելի է, որ երբ խոսվում է զոհաբերության կամ դրա որևէ նոր տեսակի մասին, Սուրբ Գիրքը մեզ ներկայացնում է օրինակներ, երբ միևնույն զոհաբերությունը և՛ ընդունվում, և՛ մերժվում է Տիրոջ կողմից: Ասվածի լավագույն օրինակը Ծննդոց 4-րդ գլխում է՝ Աբելի և Կայենի պատմությունը: Ըստ այսմ՝ պետք է շեշտել կարևոր մի հանգամանք. թե՛ Վկայության խորանի, և թե՛, առհասարակ, ցանկացած զոհաբերության արժեքը մեծապես կախված է զոհ մատուցողի ուշադրությունից, զգոնությունից և իր առջև դրված պարտականությունների կատարման հանդեպ ունեցած պատասխանատվությունից: Ավելին՝ այս պատմությունը կարևոր նախազգուշացնում է այն մասին, որ չպետք է թույլ տալ՝ անձնական քմահաճույքները որոշեն մեր «պաշտամունքային» հարաբերությունները Աստծո հետ: Միևնույն ժամանակ սխալ կլինի Նադաբի և Աբիուդի արարքը դիտարկել միայն որպես պարզ անհնազանդություն: Որոշ մեկնաբանությունների համաձայն՝ նրանց գործողությունն ընկալվում է իբրև մեծագույն քայլ, Աստծուն առավել մոտ լինելու ձգտում: Նադաբը և Աբիուդն իրենց այս քայլով դիմեցին լրջագույն զոհողության, այն է՝ մարդկային զոհաբերության, որը նորաստեղծ Վկայության խորանի պատմության մեջ մնաց իբրև բացառիկ ու դժվարըմբռնելի մի իրողություն:

Համաձայն սուրբգրային պատումի՝ Նադաբն ու Աբիուդը, բուրվառներ վերցնելով, դրանց մեջ կրակ դրեցին, խունկ գցեցին և ապա Տիրոջ առջև օտար կրակ մատուցեցին, որը, սակայն, Աստված նրանց չէր պատվիրել: Այս գործողության հետևանքը լինում է վերջիններիս մահը. երկնքից իջած կրակը կլանում է նրանց և սպանում: Հաջորդիվ Մովսեսը պատվիրում է դուրս տանել նրանց մարմինները բանակատեղիից:

Բուրվառները, որոնք օգտագործեցին Նադաբն ու Աբիուդը, ամենայն հավանականությամբ, մետաղական ամաններ էին՝ երկար բռնակներով, որոնք կարող էին կիրառվել նաև այրվող ածուխները հավաքելու համար: Նրանք չվերցրին քահանայության համար կատարված անդրանիկ զոհաբերություններից մնացած կրակից, փոխարենը նոր կրակ վառեցին և լցրին այրվող ածուխներն իրենց բուրվառների մեջ՝ այս կերպ թույլ տալով մեծագույն սխալ: Այդ պատճառով է ասվում. «Տիրոջ առջև անվավեր (եբրայերեն տեքստում «անվավեր» բառին փոխարինում է «օտար» բառը) կրակ մատուցեցին» (Ղևտ. 10:1): Նադաբն ու Աբիուդն այս դեպքում գործեցին ինքնուրույն և չխորհրդակցեցին իրենց հորեղբոր՝ Մովսեսի հետ: Վերջիններս կրակ վառելու իրենց սեփական նախաձեռնությանը կարծես ավելի մեծ նշանակություն տվեցին և նույնիսկ եթե մտադիր էլ չէին ստորադասել Աստծո պարգևը (կրակը) և ներկայացնել այն երկրորդական իրենց արածի համեմատ, այդուհանդերձ ժողովուրդը, որն ականատեսը էր վերաբերվում նրանց, դա հենց այդպես էլ կարող էր ընկալել:

Կատարվածից հետո Մովսեսը դիմում է Ահարոնին՝ ասելով. «Այս ասաց Տերը. «Ինձ մերձեցողներին պիտի ցույց տամ Իմ սրբությունը և պիտի փառավորվեմ ողջ ժողովրդի առաջ»» (Ղևտ. 10:3): Ընթերցողի համար, անշուշտ, զարմանալի են թե՛ Տիրոջ գովասանքի խոսքը՝ «Ինձ մերձեցողներ», և թե՛ Մովսեսի ու Ահարոնի պահվածքները: Մովսեսի համար կարծես ամեն ինչ կարգին է, չկա արտառոց որևէ բան, քանի որ նա նախապես զգուշացրել էր քահանաներին անել միայն այն, ինչ իր միջոցով կպատվիրի Տերը: Ավելին՝ նա նույնիսկ չի քննարկում կատարվածը և չի դատապարտում իր եղբորորդիների արարքը: Հայտնի միդրաշներից մեկում կարդում ենք Մովսեսի և Ահարոնի հետևյալ երկխոսությունը. «Ահարո՛ն, իմ եղբայր, ես գիտեի, որ Տունը սրբագործվելու է մերձավորների միջոցով (Աստծուն մոտ գտնվողների), և կարծում էի, որ դա կլինի կա՛մ իմ միջոցով, կա՛մ քո միջոցով: Այժմ տեսնում եմ, որ նրանք (քո որդիները) գերազանցում են և՛ ինձ, և՛ քեզ»: Մովսեսն այս կերպ մխիթարում է Ահարոնին՝ միաժամանակ փորձելով պարզաբանել եղելությունը. «Եվ Ահարոնի սիրտը կսկծաց» (Ղևտ. 10:3): Ահարոնը չգիտի, թե ինչ պատասխանի Մովսեսին, այդ իսկ պատճառով լռությամբ ընդունում է Տիրոջ դատավճիռը: Նա իր լռությամբ հակադրվում է այն աղաղակներին, որոնք սովորաբար հնչում են նմանօրինակ ողբերգությունների ժամանակ: Այս կերպ նա ցույց է տալիս իր վճռականությունը՝ պահպանելու այն սկզբունքը, թե զոհաբերություն կատարող քահանան չպետք է տրվի սեփական զգացումներին:

Որոշ ուսումնասիրողներ ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ Նադաբի և Աբիուդի մահվան պատմությունից անմիջապես հետո Սուրբ Գիրքը խոսում է այն մասին, որ քահանաներին արգելվում է ծառայություն մատուցել Վկայության խորանում, եթե նրանք օգտագործել են գինի կամ ոգելից այլ խմիչքներ: Դրանից եզրակացվում է, որ Նադաբի և Աբիուդի մեղքը հենց այդ էր, այն է՝ նրանք Վկայության խորան էին մտել հարբած վիճակում: Սակայն ինքնին դժվար է ենթադրել, որ այնպիսի մարդիկ, ինչպիսիք էին Նադաբն ու Աբիուդը, կարող էին հարբած վիճակում լինել Վկայության խորանում ծառայության հենց առաջին օրը: Ավելին՝ հավանական է, որ բնագիրն այստեղ այլ նպատակ ունի. ցույց տալ, որ Ահարոնի որդիներն ավելի շատ առաջնորդվում էին զգացմունքներով, քան բանականությամբ:

Հրեա ռաբբիներից մեկի պնդմամբ՝ Ահարոնի որդիների մահվան պատճառն այն է, որ նրանք չցանկացան դիմել ո՛չ Մովսեսին, ո՛չ էլ իրենց հորը՝ կարծելով, թե կարող են ավելի լավ առաջնորդել ժողովրդին: Ըստ երևույթին՝ նրանց քայլը սխալ չէր, քանի որ Ղևտ. 1:7-ում Աստված պատվիրում է Մովսեսին. «Քահանաները՝ Ահարոնի որդիները, զոհասեղանի վրա կրակ թող դնեն և կրակի վրա փայտ դիզեն»: Եվ նրանք հետևեցին այս պատվիրանին, սակայն արեցին դա՝ որոշում կայացնելով Մովսեսի ներկայությամբ՝ կարծես իրենց ուսուցչի փոխարեն: Այդ պատճառով է ասվում՝ «անվավեր կրակ մատուցեցին, որը Տերը չէր պատվիրել նրանց» (Ղևտ. 10:1), այլ պատվիրել էր Մովսեսին: ➥ էջ 4

# *Յակոբ Նալեան.* Պասկի Խորհուրդի մասին

Պասկը արդար զուգակցութիւնն է ամուսնացածներուն՝ արուին եւ էգին՝ անբաժանելի կապակցութիւն եւ կենցաղավարութիւն ունենալով: Արդ, արդար զուգակցութիւն ըսելով, կը զանազանէ Սուրբ Պասկը շնութենէն, պոռնկութենէն եւ ազգապղծութենէն, որ արդար զուգակցութիւն չեն, այլ պիղծ ու անմաքուր խառնակութիւն: Արուի եւ էգի ըսելով՝ Սուրբ Պասկը կը բաժնէ արուամոլութենէն, որ չլսուած չարիք է: Եւ ըսելով, թէ անբաժանելի կենցաղավարութիւն ունենալով՝ աստուածային վճիռը կը հաստատէ, թէ՝ երկուքը մէկ մարմին թող ըլլան, որ Քրիստոս վճռեց՝ ըսելով, թէ՝ Աստուծոյ միացուցածը մարդը թող չբաժնէ [տես Մատթ. 19.6]. որովհետև այս խորհուրդն օրինակն ու գաղափարն է Քրիստոսի Եկեղեցւոյ եւ մարդկային բնութեան հետ միաւորութեան: Տակաւին՝ Քրիստոս Եկեղեցւոյ համար ըսաւ, թէ՝ Ես ձեզի հետ եմ բոլոր օրերը, մինչև աշխարհի վախճանը:

Իսկ մարդկային բնութեան հետ անբաժանելի միաւորութեան համար Սուրբ Յովհաննէս Մկրտիչը ըսաւ, թէ՝ Անոր կօշիկներուն կապերն իսկ չեմ կրնար արձակել, այսինքն՝ Բանը մարմինէն: Եւ, հետևաբար, ով որ Սուրբ Պասկը կը քակէ, այդպիսին Բանը մարմինէն կը քակէ, եւ Քրիստոս-Փեսան հարսէն՝ Եկեղեցիէն, որ թէեւ անկարելի է, որ Բանն Աստուած մարմինէն ու Եկեղեցիէն բաժնուի, սակայն, Պասկը քակողը եթէ հնարաւորութիւն ունենար, այդ կապն ալ կը քակէր: Քանի որ, ինչպէս աղքատներուն համար ըսաւ, թէ՝ ինչ որ անոնց ընէք, Ինծի ըրած կ'ըլլաք [տես Մատթ. 25.40], այդպէս ալ, ով որ Սուրբ Պասկի քակման պատճառ կ'ըլլայ ու կը քակէ զայն, այդպիսին Նեստորէն աւելի չար է, Քրիստոսի միաւորութիւնը բաժնող է:

Իսկ եթէ ըսես, թէ Քրիստոս ըսաւ, որ եկայ որդին հօրմէն, աղջիկը մօրմէն եւ կեսուրը հարսէն բաժնելու [տես Մատթ. 10.34—35], կ'ըսեմ, թէ՝ թեթև միտքով տես, որ չըսաւ թէ՝ եկայ հարսը փեսայէն քակելու ու փեսան հարսէն, որովհետև անոնց անբաժանելի միաւորութիւնը օրինակ էր Իր միաւորութեան: Արդարև, հայրը որդիէն, աղջիկը մօրմէն ինչպէ՞ս կը բաժնէ. ըսուածը այն է, թէ՝ ով որ հայրն ու մայրը, աղջիկն ու որդին Ինձմէ աւելի կը սիրէ, արժանի չէ Ինծի, որովհետև առաւել ու գերիվեր սիրով՝ միայն Աստուած է սիրելի:

Իսկ այն մարդիկ, որոնք Քրիստոսի աշխարհ գալէն առաջ հայրը եւ մայրը առաւել կը սիրէին, Քրիստոս եկաւ ծանուցելու զԱստուած, որ առաւել սիրելի է. տակաւին՝ այն սէրը, որ Աստուած կը վայելէ (որ մարդիկ սխալելով հօր եւ մօր կու տային), առ Աստուած կը դարձնէ: Արդարև, երբ մարդիկ՝ հայր եւ մայր, որդիներ ու աղջիկներ, կը սիրեն, Աստուծոյ եւ Անոր հրամանի կատարումին միտումով թող սիրեն, որովհետև ով որ իր հայրն ու մայրը կը սիրէ, անոնց երախտիքը կը ճանչնայ, իսկ ծնողներուն երախտիքը ճանչնալը զԱստուած ճանչնալ է:

Դարձեալ՝ այսպէս իմացիր պասկին անքակութիւնը Քրիստոսի միաւորութենէն, որ Քրիստոս յաւիտենական ծնունդին համար ըսաւ, թէ՝ Հօրմէն ելայ եւ աշխարհ եկայ [Յովհ. 16.20] եւ երբեք չըսաւ, թէ՝ մարմինէս ելայ կամ կ'ելլեմ:

*Ռաֆայել Սանտի. Կույս Մարիամի նշանադրությունը, 1504 թ.*

Այսպէս ալ մարդը կրնայ հայրն ու մայրը ձգել ու հեռանալ եւ հեռուէն հետևիլ. սակայն չի՛ կրնար զուգակիցէն ելլել ու բաժնուիլ ու ուրիշ մը առնել, ինչպէս որ Քրիստոս ալ չի կրնար մարդկային բնութենէն բաժնուիլ (որ Իրեն միաւորած է) ու հրեշտակի բնութիւն առնել:

Արդարև, պասկը նշանէն [նշանտուքէն] կը սկսի, փեսային ու հարսին սիրտի հաւանութեամբ կը հաստատուի եւ մէկ անկողին մտնելով՝ միաւորուելու համար, կը կատարուի: Տակաւին՝ նշանը պասկին ծաղիկն է՝ դաշնադրուած քահանային աղօթքներով, եւ պէտք չէ ծաղիկը թօթափել ու ձօղով վար նետել, որովհետև այդպիսի մարդը նման է ցուրտ քամիի ու ձիւնի, որ ծառերու ծաղիկը կը թափեն ու կ'այրեն, եւ անպտուղ կ'ըլլան քահանայական աղօթքներէն:

Սակայն Աստուած այդպէս չըսաւ, որովհետև թէեւ պասկի բուն [մեծ] պատճառը որդեծնութիւնն է, բայց Սուրբ Աստուածածինը, որ Յովսէփ Աստուածահօր հետ նշանուած էր, թէեւ Սուրբ Հոգիէն յղացաւ ու զՔրիստոս պտղաբերեց, Յովսէփը, որ կամեցաւ նշանը քակել, Աստուծոյ հրեշտակը ղրկուեցաւ իր մօտ ու ըսաւ, թէ՝ մի՛ վախնար զայն քեզի կին առնելէ, եւ թէ՝ Մարիամը քեզի կին առ [տես Մատթ. 1.20—24]: Ըսել կ'ուզէր, թէ՝ մաքուր նշանածդ ձեռքէդ մի՛ ձգեր: Այսպէս ալ Յակոբ Նահապետը՝ եօթը տարի աշխատեցաւ իր նշանածին համար եւ իր ձեռքէն չձգեց, քանի որ օրինած նշանը կէս պասկն է. եւ Յակոբ Նահապետը կէս պասկին համար, որ նշանն էր, Ռաքէլը իրեն կին կը կոչէր:

Այսպէս ալ իւրաքանչիւր նշանուած, կերպով մը կուսաբար եւ հեռուէն պասկուածի պէս է իր նշանածին հետ: Իսկ կախարդ, բանսարկու, պիղծ եւ անիծեալ չարաբերան պառաւներու խօսքերուն համար, որ նշանը կը քակէ, այդպիսին Եւային նման է, որ օձին կը լսէ եւ լուսեղէն պատմուճանէն կը զրկուի, քանի որ օձակերպ եւ չար պառաւներուն թունաւոր [խօսքերը] կը լսէ ու չի՛ լսեր աստուածային կանոններուն:

Իսկ եթէ մարդ մը իր նշանածին մէկ պակասութիւնը [թերութիւնը] պատճառաբանութիւն բռնէ՝ բանսարկուներէն լսելով, եւ կոյս աղջկան ու կոյս տղային անունը ապականէ, թող Յակոբ Նահապետը իրեն օրինակ առնէ, որ Ռաքէլը նշանեցին իրեն, որ գեղեցիկ էր, սակայն, մեծ քոյրը՝ Լիան տուին, որ թոյլ ու խոնաւ աչքեր ունէր. սակայն ան Լիայէն չբաժնուեցաւ, այլ ընդունեց:

Տակաւին՝ գիտելի է, որ պասկը երեք տեսակի բարիք ունի.

Առաջինը հաւատքն է, որ է հաւատարմութիւնը եւ մէկը միւսին նմանութիւնը, որպէսզի ուխտին վրայ հաստատ մնան եւ օտար անկողինով չպղծուին:

Երկրորդը զաւակն է, որ ծնին, կրթեն եւ սնուցանեն ի փառս Աստուծոյ:

Երրորդը խորհուրդն է, որ մինչև մահ չբաժնուին, ինչպէս Քրիստոս Իր մարմինէն անբաժանելի է մինչև յաւիտեան, այդպէս ալ ամուսնացածները անքակ մնան մինչև մահ:

Այս ալ գիտելի է, թէ միաւորութիւնը երկու կերպ է, ինչպէս նաեւ մահն ալ երկու կերպ է:

Առաջին միաւորութիւնը հոգևոր է, որ սիրտի հաւանութիւնն է, եւ ասիկա կը բաժնուի, երբ մարդ այս աշխարհին համար մեռնի՝ կրօնաւորութեան մէջ մտնելով, որ երկուքը մէկը միւսին քոյր եւ եղբայր ըլլան ու ուխտեն մինչև մահ եւ կամ որոշ ժամանակ մը մէկ անկողինի մէջ չմտնել:

Երկրորդ միաւորութիւնը մարմնաւոր է՝ համաձայն մերձաւորութեան օրէնքին, եւ ասիկա միայն զոյգերէն մէկուն կամ երկուքին մարմնաւոր մահուամբ կ'արձակուի:

Տակաւին՝ մերձաւորութեան չորս պատճառ կայ.

Առաջինը որդեծնութիւնն է:

Երկրորդը՝ իրարու պարտքը վճարել:

Երրորդը՝ պոռնկութենէ փախչիլը, ինչպէս կ'ըսէ Սուրբ Պօղոս, թէ՝ պոռնկութենէ զերծ մնալու համար իւրաքանչիւր մարդ իր կինը թող առնէ, եւ կինն ալ՝ իր մարդը [տես Ա. Կորնթ. 7.2—3], եւ այս երեք կերպերը մեղք չեն:

Չորրորդը՝ ցանկութիւններուն յագեցում տալն է, եւ այն երբեմն մահացու մեղք է եւ երբեմն ալ՝ ներելի:

Ամուսնացողներուն մէջ զանազան մեղքեր կան. չարաչար գործածութիւն, անպատեհ ժամանակ, աղտեղի միտք, անպատշաճ կամ սուրբ տեղ, յղացածին որպիսութիւնն ու կերպը:

Հարսին ու փեսային չորս կերպի զարդ կայ, որ հոգևոր մտօք իմանալի են.

Առաջին՝ մատին դրուած մատանին:

Երկրորդ՝ գլուխին դրուած պասկը:

Երրորդ՝ կարմիր քօղը (միջնադարեան հայկական հարսանեկան սովորութիւն մը, որ մինչև 19—20-րդ դար պահպանուած է.— *Վ. Ք.*):

Չորրորդ՝ կանաչ ու կարմիր մետաքսէ դերձանը (միջնադարեան հայկական հարսանեկան սովորութիւն մը, որ մինչև 19—20-րդ դար պահպանուած է.— Վ. Ք.):

Մատանին կը նշանակէ, թէ հարսն ու փեսան իրար միջև սիրով պիտի մնան, իսկ օտարին համար՝ կնքուած, որովհետև սէրը սիրտին մէջ է: Արդարև, Սողոմոն Իմաստունը կ'ըսէ, թէ՝ զիս իբրև կնիք դիր սիրտիդ վրայ [տես Երգ 8.6]:

Գլուխին դրուած պասկը կը նշանակէ, թէ՝ կուսութեան համար մինչև այս պահը բարութիւն ըրին, պատերազմեցան ու յաղթեցին եւ այս պասկին արժանացան, որովհետև Աստուած յաղթողին կու տայ Եկեղեցւոյ փառքի պասկը: Արդարև, պասկելու ժամանակ խաչը հարսին ու փեսային գլուխին վրայ կը բռնեն՝ յօրինակ Քրիստոսի յաղթութեան: Նաեւ՝ քանի որ խաչը Քրիստոսի չարչարանքներուն պասկն է եւ Եկեղեցւոյ պարծանքը: Փեսան ու հարսը մինչև մահ իրենց գլուխները մէկը միւսին վրայ պիտի դնեն պասկին համար:

Հարսին կարմիր քօղը կը նշանակէ անոր հնազանդութիւնը փեսային, որ մինչև մահ պիտի հնազանդի իր փեսային, որովհետև կարմիր քօղը արեան գոյն ունի, որ կ'ուզէ ըսել, թէ՝ արեան չափ հնազանդ պիտի ըլլայ իր փեսային. սակայն այնպիսի հնազանդութիւն, որ մեղք չծնի: Նաեւ՝ ինչպէս Եկեղեցին կը հնազանդի Քրիստոսի մինչև արեան հեղում (քանի որ Քրիստոս Իր Եկեղեցին սիրեց հարսի մը պէս եւ Իր արիւնը թափեց անոր համար), այդպէս ալ պէտք է ըլլայ հարսը իր փեսային համար:

Կարմիր եւ կանաչ մետաքսէ դերձանը կը նշանակէ Քրիստոսի մարդեղութիւնը. կանաչը՝ յօրինակ Աստուածութեան, որ կը նշանակէ Քրիստոսի մշտնջենաւոր եւ անքառամ թագաւորութիւնը. իսկ կարմիրը՝ արիւնով ներկուած մարմինն ու մարդեղութիւնը: Տակաւին՝ ինչպէս Աստուածութիւնը մարդկութենէն անբաժանելի է, ինչպէս կանաչը կարմիրէն, այդպէս ալ փեսան իր հարսէն մինչև մահ անբաժանելի պիտի մնայ: Այդ պատճառով փեսային ու հարսին գլուխին կը կապեն կանաչն ու կարմիրը, երբ Սուրբ Աւետարանը կ'ըսէ, թէ՝ Աստուծոյ միացուցածը մարդ թող չի՛ բաժնէ:

Ով որ Սուրբ Պասկը կը քակէ,
այդպիսին պիղծ Նեստորին նման է,
որ ըսաւ, թէ Քրիստոս բաժնուած է,
եւ դժոխքին մէջ միշտ կը տանջուի:

*Շարունակելի*

**«Քրիստոնէական ուսանելի», 1806**
**Աշխարհաբարի վերածեց**
**Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԸ**

# *Նադաբ և Աբիուդ.* մեղավորնե՞ր, թե՞ մեծագույն մարդիկ

↩ էջ 3

Հրեա իմաստունների մեկնաբանությամբ՝ խոցվեցին միայն Նադաբի և Աբիուդի հոգիները, իսկ նրանց մարմինները մնացին անվնաս: Կրակը դուրս եկավ Սրբարանից, ինչպես երկու բարակ թել, մտավ նրանց քթանցքներով և ներսից խոցեց նրանց:

Հաջորդիվ Մովսեսը կանչում է Ահարոնի հորեղբայր Ոզիելի որդիներին՝ Միսադայիին ու Եղիսափանին, և կարգադրում տանել իրենց եղբայրներին բանակատեղիից դուրս: Եթե Ահարոնն ու նրա որդիները՝ Եղիազարն ու Իթամարը, դիպչեին դիակներին, կդառնային անմաքուր և չէին կարողանա ծառայություն մատուցել Վկայության խորանում: Այդ իսկ պատճառով էլ Մովսեսը դիմում է Միսադայիին և Եղիսափանին: Եթե հոգևոր վերնախավը, հատկապես այն պահին, երբ կոչված է ներկայացնելու ազգն Աստծո առաջ կատարյալ միասնության վիճակում, մահվան արժանի մեղք է գործում, ապա նրանց մեղքը դառնում է ամբողջ ազգի մեղքը, իսկ նրանց մահը՝ ազգային աղետ:

Այս պատմության գրեթե բոլոր մեկնաբանությունները բացասական կերպով են անդրադառնում Նադաբի ու Աբիուդի արարքին և խստորեն դատապարտում վերջիններիս: Այս արվում է, սակայն, որևէ մեկին նմանատիպ քայլից զերծ պահելու նպատակով: Այն, ինչ արեցին Նադաբն ու Աբիուդը, թույլատրելի էր միայն իրենց և նախատեսված էր միայն ու միայն իրենց համար, իսկ մնացյալ բոլոր պարագաներում այդ անելը խստագույնս արգելված է: Ասվածի ապացույցը Թվեր 16-րդ գլուխն է, որտեղ ներկայացվում է Մովսեսի և Ահարոնի դեմ Կորխի, Դաթանի ու Աբիրոնի ապստամբությունը: 250 մարդիկ, որոնք հարել էին այս երեքին, իրենց բուրվառներով պիտի խունկ մատուցեին Տիրոջը՝ Վկայության խորանի դռանը կանգնած, սակայն «Տիրոջից հուր ելավ ու ճարակեց այն երկու հարյուր հիսուն մարդկանց, որոնք խունկ էին մատուցում» (Թվեր 16:35): Այս մարդիկ ցանկանում էին նմանվել Նադաբին ու Աբիուդին, բայց չէին գիտակցում, որ երկու եղբայրների արարքն ընդօրինակելի չէ: Որքան էլ որ անտրամաբանական հնչի, Նադաբի և Աբիուդի քայլը ենթակա չէ կրկնության, սակայն նման միտք և գիտակցում ունենալը, այն է՝ սեփական անձը զոհել Տիրոջ փառքի համար, գովելի է Աստծո աչքին: Այդ է պատճառը, որ մեծագույն այս մարդկանց մահը պիտի սգար ողջ Իսրայելը. «Տիրոջ կողմից այրվածների համար թող ողբան ձեր եղբայրները և Իսրայելի ողջ տունը» (Ղևտ. 10:6):

Նադաբի և Աբիուդի պատմությունը դժվար է եզրափակել միայն «մեղք—պատիժ» պատճառահետևանքային շրջանակում: Նրանց արարքը մի կողմից զանցանք է, մյուս կողմից՝ Աստծուն առավել մերձենալու «մահացու» քայլ: Հինկտակարանյան տրամաբանությամբ այս երկակիությունը պատահական չէ: Որքան մեծ է մարդու կոչումը, այնքան ավելի խիստ են նրա նկատմամբ դրված պահանջները: Այն, ինչ կարող է աննշան թվալ սովորական մարդու պարագայում, Աստծուն մոտ կանգնածների համար դառնում է ճակատագրական սխալ: Աստված հաշիվ է պահանջում արդարներից նույնիսկ ամենափոքր սխալների համար, անգամ այնպիսիների, որոնք մազից էլ բարակ են: Երբ Աստված ցույց է տալիս, թե որքան խիստ է վերաբերվում արդարների նկատմամբ, ժողովուրդն ավելի է զգուշանում և հարգանքով վերաբերվում քահանաներին, որոնք Տիրոջը ծառայություն մատուցելիս պետք է լիովին նվիրվեն Նրան, իրենց մտքերը մշտապես մաքուր պահեն, իսկ գործողությունները՝ կատարված առավելագույն ճշտությամբ: Այս իմաստով՝ Նադաբն ու Աբիուդը չեն կարող ընկալվել միայն իբրև պարզ մեղավորներ: Նրանց պատմությունը վկայում է այն մասին, թե ինչ գին կարող է արժենալ Աստծուն մոտենալու մեծագույն ցանկությունը:

Հետևաբար՝ նրանց վերաբերյալ հնչող հարցը՝ հերթական մեղավորնե՞ր, թե՞ մեծագույն մարդիկ, չի սահմանափակվում պարզ բացատրությամբ: Նրանք եղան այնպիսի մարդիկ, որոնց մեծությունը բացահայտվեց հենց իրենց անկմամբ:

**Գագիկ սրկ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**Արմենակ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

# Ճանապարհ դեպի Աստված

*(Դ. Գասպարյան, «Եղիշե Չարենցի գրական-քաղաքական աղերսները», մենագրություն, «Գիտություն» հրատ., 2026, 692 էջ)*




Դավիթ Գասպարյանի «Եղիշե Չարենցի գրական-քաղաքական աղերսները» գիրքը չարենցագիտության մեծարժեք ուսումնասիրություն է. լույս է տեսել 2026 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ և Համազգային հայ կրթական ու մշակութային միության հովանավորությամբ:

Գասպարյանի հեղինակությամբ և աշխատասիրությամբ 1970-ականներից առ այսօր հրատարակվել են չարենցագիտության նոր շրջափուլ նշանավորող մի քանի մենագրություն, բանաստեղծի անտիպ երկերի երկու գիրք, Չարենցի մասին հուշերի երկու հատոր: Չարենցի անվան հետ կապված գրապատմական այս անսպառ հետաքրքրությունը, որ բնորոշ է Դավիթ Գասպարյանին, պայմանավորված է Չարենցի անհատական բարդ ու հարուստ ներաշխարհով և դեռևս ամբողջացող ստեղծագործությամբ:

Այս ուսումնասիրության առանցքը Չարենցի բազմաշերտ կապերն են ժամանակի պատմաքաղաքական և գրական-մշակութային իրականության հետ: Կենսագրական և ստեղծագործական նոր հանգամանքների ի հայտ բերումով՝ վերագնահատվում է Չարենցի պատմաքաղաքական կերպարը՝ որպես ժամանակի հայելային դիմապատկեր, ուր անհատն ու պատմությունը, գրականությունն ու քաղաքականությունը ոչ միայն մի են՝ մարմին ու ոգի, այլև բախվում են իրար, և անհատի կործանումը ժամանակի կողմից դառնում է նրա բարոյական հաղթանակի վերահաստատումը: Այլ կերպ ասած՝ ուսումնասիրության մեջ գրական քննադատությունն օրինաչափորեն միախառնված է քաղաքական պատմագիտությանը, որովհետև միմիայն այդ ճանապարհով կարող էր ամբողջանալ գրականության և ժամանակի օրգանական կապը:

Ուսումնասիրության 21 գլուխներում ամբողջացվում է *Չարենց գերմարդու* կերպարը: Հարուստ փաստերով և նուրբ, խոր ու ընդգրկուն վերլուծություններով նորովի ներկայացվում են Չարենցի կյանքի ու գործունեության՝ թվում է ծանոթ, բայց նորահայտ փաստերի լույսի ներքո ըստ ամենայնի անծանոթ իրողությունները:

Պատմության և անհատի ճանապարհի միասնությունը, որ ամբողջ գրքի փիլիսոփայական, պատմագիտական և գրականագիտական հիմնադրույթն է, բացում է և՛ 20-րդ դարի պատմության բարդ ու հակասական շերտերը, և՛ Չարենցի անհատական աշխարհի փակ էջերը: Սա այն դեպքն է, երբ անհատի կենսագրությունն անդրադարձնում է ժողովրդի պատմությունը, իսկ պատմությունը առաջնորդում է անհատի ուղին: Ազգային ճակատագիրը ձևավորեց Չարենցին, իսկ Չարենցն իր ստեղծագործությամբ վերափոխեց ժողովրդի գիտակցությունը, պատմաքաղաքական աշխարհայացքը: Առանց ժամանակի պատմաքաղաքական իրադարձությունների՝ չէր լինի ամբողջական Չարենցը, և առանց Չարենցի՝ հայոց պատմության 20-րդ դարի գեղարվեստական ընկալումը կմնար թերի:

Այսպիսով՝ աշխատության տրամաբանական եզրակացությունը Չարենց գերմարդու մտահանգումն է, որ չարենցագիտության զարգացման փիլիսոփայական նոր մտայնություն է:

Ուսումնասիրությունը գնահատելի է նաև որպես պատմագիրք՝ 20-րդ դարի նշանավոր դեմքերով ու իրադարձություններով, որոնք հեղինակի հայացքով բացահայտվում են լուսապատկերային իսկությամբ, պատմության ձայնի կենդանի թրթիռներով: Պատմության կենտրոնում Չարենցն է՝ ժամանակի գլխավոր հերոսներից մեկը՝ որպես գաղափարի առաջնորդ և պայքարի մասնակից՝ հայրենիքի կամավոր զինվոր, հեղափոխական, Հայ հեղափոխական դաշնակցության կառավարության պաշտոնյա, կոմունիստ, հետո նաև հակադաշնակցական ու հակակոմունիստ, բայց մշտապես ազգային գործիչ, ստալինյան բռնատիրության և բոլշևիզմի զոհ: Այս և ուրիշ ընդգրկումներով վերծանվում է Չարենցի կերպարը՝ որպես ազգային հավաքական հանճարի մարմնացում:

Բանաստեղծի քաղաքական համակրանքների առնչությամբ հեղինակը գրում է. «Երբեք չի եղել այնպես, որ անկախ երբեմնակի սուր առճակատումներից, խորքում իսկական դաշնակցականը և իսկական կոմունիստը նույնը չերազեին՝ ապահով և ամուր հայրենիք» (էջ 616–617), և սա վերահաստատում է այն պարզ ճշմարտությունը, որ Չարենցի միակ «կուսակցությունը» հայրենիքն էր՝ ազատ, անկախ, միացյալ Հայաստանը, որի գաղափարական ուխտավորն էր, անձնուրաց զինվորը, նաև նահատակը: Աշխատության մեջ այս ամենը վերագնահատվում է փաստերից բխող դատողություններով՝ առանց ավելորդ զգացականության ու վերացականության. «Դժվարությունը,– գրում է գրականագետը,– փաստերի ամբողջությանը տիրապետելն ու համակարգի մեջ տեսնելն է, ինչն էլ եղել է այս ուսումնասիրության առաջադիր ծրագիրը» (էջ 618):

Ուսումնասիրության առաջին գլուխը՝ «Եղիշե Չարենցը՝ կամավորական», սկիզբն է անհատի և ժողովրդի համատեղ ճանապարհի, որ տանում է դեպի «Դանթեական առասպել» և «Ազգային երազ»: Պատմական իրողությունների զուսպ, բայց համապարփակ արձանագրությամբ երևան են բերվում ստեղծագործական նախադրյալներն ու նախատիպերը, նաև ազգային ներքին կյանքի հակասությունները, ինչպես՝ «Ազգային երազ» պոեմում Անդրանիկ–Դաշնակցություն հակադրությունն է՝ ի դեմս Լեգեոնի՝ Անդրանիկի, և Ահոյի՝ Ավետիս Ահարոնյանի:

Երկրորդ գլխում՝ «Եղիշե Չարենցը Առաջին հանրապետության տարիներին», ներկայացվում են առանցքային և փոխլրացնող հետաքրքրական փաստեր Հայաստանի առաջին հանրապետության պատմությունից՝ ընդգրկելով պետականության վերականգնումը, պատերազմները, հանրապետության անկումը, Հայաստանի խորհրդայնացումը, փետրվարյան ապստամբությունը, Չարենցի գործունեությունն այդ տարիներին: Միանգամայն նոր ու հիմնավոր բացահայտումներով վերլուծվում են պատմական ժամանակի անդրադարձները «Սոմա», «Ամբոխները խելագարված», «Չարենց-Նամե» պոեմներում, ռադիոպոեմներում և այլ գործերում:

Հաջորդ գլուխներում համապատասխանաբար և բազմաձյուղ ներկայացվում են Չարենցի կապերը ժամանակի երևելի դեմքերի հետ՝ Վահան Տերյան, Հովհաննես Թումանյան, Ավետիս Ահարոնյան, Ատոմ Յարճանյան (Սիամանթո), Դանիել Վարուժան, Նիկոլ Աղբալյան, Արշակ Չոպանյան,Արմենուհի Տիգրանյան, Վարդգես Ահարոնյան, Հակոբ Օշական, Կոստան Զարյան, Ավետիք Իսահակյան, Վահան Նավասարդյան, Խմբապետ Շավարշ, Ակսել Բակունց, Երվանդ Քոչար… Ամբողջ շարադրանքի ընթացքում ներկա են նաև այլ անուններ՝ Դեմիրճյան, Զորյան, Աբով, Դաշտենց, Արմեն, Վշտունի և ուրիշներ… Ահա այս մարդկային-մշակութային-քաղաքական բազմաշերտ շրջագծում բացահայտվում են շատ կարևոր հարցադրումներ, որոնք լիարժեք պատկերացում են ստեղծում ժամանակի և միջավայրի վերաբերյալ:



*Մարտիրոս Սարյան. «Եղիշե Չարենցի դիմանկարը», 1923 թ.*

Տասներորդ գլուխը վերաբերում է «Երկիր Նայիրի» վեպի հայեցակարգին, ուր համատեղվում են պատմական ողբերգական իրադարձություններն ու բանաստեղծի հոգեբանական-գաղափարական տեղաշարժերը: Իսկ հայեցակարգային մտահանգումներից մեկը սա է. «Վեպը ռուս-թուրքական դաշինքին զոհաբերված և աստիճանական ոչնչացման դատապարտված Հայաստանի ողբերգությունն է՝ ընդհանուր առմամբ՝ հեգնանքի, իսկ տեղ-տեղ էլ անգամ խելագարության հասնող զավեշտի լեզվով….» (էջ 259):

Ինչպես բոլոր գլուխներում առհասարակ, այնպես էլ այստեղ, գլխավոր երկերը դիտարկվում են այլ գործերի հետ ունեցած պատմահոգեբանական հանգույցներով՝ ամբողջացնելով Չարենցի ստեղծագործական ճանապարհի լիարժեք պատկերը:

Ուսումնասիրության առանցքային հարցադրումներից է Չարենցը և Հայ հեղափոխական դաշնակցությունը թեման, որ առաջ է մղվում հետևյալ ուղղություններով՝ «Դաշնակցությունը «Էպիքական լուսաբաց» գրքում և «Լիրիքական անտրակտ» շարքում», «Դաշնակցությունը «Գիրք ճանապարհի» ժողովածուում», «Աշխարհայացքի ազգային հիմքերը և Դաշնակցության հիշատակումներն անտիպ երկերում (1935–1937)»: Արխիվային վավերագրերով բացահայտվում են Չարենցի վերաբերմունքի իրական ու գեղարվեստական շերտերը Դաշնակցության հանդեպ՝ երևան բերելով ժամանակի հրամայականների ներքո վաղանցուկ նահանջը և վերջնական հաստատուն դարձը՝ «Դաշնակցականներին» քաղաքական հեգնանքից մինչև «Մահվան տեսիլ» պոեմ և անտիպ երկեր. «Դաշնակցության հետ նրա առնչությունները,– ընդհանրացնում է հեղինակը,– բազմակողմանի են ու անընդհատական, և դա՝ անկախ պատմաքաղաքական իրավիճակից, որովհետև խորհրդային տարիներին ևս, թեկուզև հալածական, բայց ամեն մի խոսքի ու հիշողության մեջ Դաշնակցության գաղափարական կենդանի աննկատ շունչը կար» (էջ 4):

Գրքի տրամաբանական ավարտը դեպի Աստված տանող մեծ ճանապարհն է. հենց այդպես էլ վերնագրված է նախավերջին՝ «Դեպի Աստված» գլուխը, որին պիտի հաջորդի խաչելություն-մահը, և Չարենցը, ըստ ժամանակի պատկերացման, ներկայանա որպես «քաղաքական մեղադրյալ՝ դաշնակցական, նացիոնալիստ, ժողովրդի թշնամի»:

«Դեպի Աստված» գլուխը ճանապարհի գրքի վերջին հանգրվանն է՝ այսպիսի ուշագրավ ընդհանրացումներով. ««Ես եմ ճանապարհը»,– Հովհաննես Ավետարանի չի բերանով ասվում է Տիրոջ խոսքը, որին Չարենցն արձագանքում է «Գիրք ճանապարհի» վերնագրված մի ամբողջ գրքով և դրան հաջորդող կյանքով ու կողմնորոշումով: Տիրոջ ճանապարհի որոնումն այդուհետև Չարենցի համար դարձավ ներքին ծրագիր և նրան տարավ դեպի Աստված, որին ասում էր Տեր… Նա մեկ թափանցում է աստվածաշնչյան մոտիվների մեջ՝ «Բանք ժողովողի», ոգեկոչում գաղափարներ ու կերպարներ, հավատաքննիչների վերադարձող միջնադարին ավելանում է նախնադարը՝ մարդ-կապիկը («Էկլեզիաստես»), մեկ խորանում հայ միջնադարի մեջ՝ Նարեկացի, և որպես Աստծու դիմում նրան («Ինչպես հնում վկան այն՝ Նարեկացին»), մեկ ուրվագծում տառապանքի խաչը շալակած և Քրիստոսի պես Գողգոթա բարձրացող տանջահար կերպարներ՝ Գրիգոր Ծերենց («Երբ բարձրանում է նա վեր», «Մի ծեր վանական»), մեկ տրվում աղոթքների («Իմ լերան աղոթքը», «22.X. 1936», «Վերջին աղոթք»): ….Չարենցի Քրիստոսը քողարկված է, ներսում է, աղոթքի պես գաղտնի. մի պահ ինքը դառնում է նրա կրկնօրինակ-նմանակը, որի ոչ միայն ձեռքերն ու ոտքերն են գամված խաչին, այլև ամբողջ մարմինն է մեխված քաղաքական իրականության խաչափայտին: ….Ամբողջ մի կյանք ծանր փորձությունների միջով անցնելով, ընկնելով հաճախ և բարձրանալով նորից՝ իր խաչը շալակած գնաց Աստծուն ընդառաջ, սպունգով Հիսուսին մոտեցրած քացախի փոխարեն, Երևանի բանտում մեկուսացած, խմեց իր ձեռքով պատրաստած թեյի դառն ու թունդ թանձրուք, իսկ շուրթերին խաչված Փրկիչի նույն խոսքերն էին՝ «Տեր, մի՛ լքիր ինձ»: Եվ Տերը չլքեց: Ծնունդի ու Հայտնության բերկրանքը պարգևողը նրան շնորհեց նաև Հարության ու Վերածնունդի հրաշքը» (էջ 567–580):

Սա Դավիթ Գասպարյանի «Անառակ որդու վերադարձը» բառեղեն կտավն է՝ ըստ Չարենցի հոգևոր դարձի:

Աշխատությունը համալրված է նաև հավելվածներով, որոնք լրացուցիչ տեղեկություններ են հաղորդում հարցադրումների շրջանակում:

Ամփոփելով՝ ընդգծենք, որ Դավիթ Գասպարյանի «Եղիշե Չարենցի գրական-քաղաքական աղերսները» մենագրությունն իսկապես նոր խոսք է չարենցագիտության մեջ, որի հիմնական նորույթը բազմաթիվ նոր փաստերի ամուր տրամաբանությամբ ստեղծված Չարենց–պատմություն ճանապարհի համապատկերայնությունն է, ուր համակշիռ են պատմությունն ու գրականությունը, և փոխլրացված՝ ժամանակն ու անհատը՝ որպես և՛ առանձին հերոսներ, և՛ երկվորյակներ:

**Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, բ. գ. թ., դոցենտ**

# Հին Կտակարանը և հրեական փիլիսոփայությունը

Հին Կտակարանը (հայտնի՝ Եբրայական Աստվածաշունչ կամ Թանախ) կենտրոնական դեր է խաղացել հրեական փիլիսոփայական մտքի ձևավորման հարցում: Այն ծառայել է ոչ միայն որպես կրոնական բնագիր, այլև էթիկական, բարոյական և փիլիսոփայական մտորումների աղբյուր:

Հրեական մտածողության վրա մեծ է եղել մասնավորապես մեկ Աստծո գաղափարի ազդեցությունը, այն պարագայում, երբ հին աշխարհի և՛ մշակույթը, և՛ փիլիսոփայությունը մեծ մասամբ ընկղմված էին հեթանոսական, դիցաբանական համակարգերի մեջ: Սակայն նկատելի է նաև, որ հրեա մտածողները, հավատարիմ լինելով Հին Կտակարանին, ինչ-որ չափով կրել են նաև հեթանոսական փիլիսոփայական մտքի ազդեցությունը: Դիցուք՝ Փիլոն Ալեքսանդրացին աստվածաշնչյան պատմությունները մեկնաբանում էր խորհրդանշականորեն և դրանք կապում հունական փիլիսոփայական հասկացությունների հետ, ինչպիսիք են լոգոսը կամ աստվածային բանականությունը: Ավելի ուշ Մովսես Մայմոնիդեսը փորձեց համաձայնեցնել Արիստոտելի փիլիսոփայությունը Թորայի ուսմունքների հետ:

Չնայած արտաքին ազդեցություններին՝ հրեական փիլիսոփայությունը միշտ վերադառնում էր Հին Կտակարանի կենտրոնական ուսմունքներին՝ հավատը մեկ Աստծո նկատմամբ, բարոյական պատասխանատվությունը, արդարությունը և իմաստության ձգտումը:

**Միաստվածություն:** Հին Կտակարանի ամենակարևոր գաղափարներից մեկը միաստվածությունն է: Այս համոզմունքը հստակ արտահայտված է Երկրորդ Օրենք 6:4-ում. «Լսի՛ր, Իսրայե՛լ, Տերը և միայն Տերն է մեր Աստվածը»: Այս համարը դարձավ հրեական աստվածաբանության և փիլիսոփայության հիմքերից մեկը: Ընդ որում՝ հրեա մտածողներն Աստծուն ընկալում էին ոչ թե որպես բնության մասի, այլ տիեզերքի ստեղծողի ու կառավարչի: Բացի այդ՝ Ծննդոց գրքում արարչագործության պատմությունն աշխարհը ներկայացնում է ստեղծված կարգուկանոնով. «Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը» (Ծննդ. 1:1): Այս համարը ձևավորեց հրեական փիլիսոփայական համոզմունքը, որ տիեզերքը ռացիոնալ և իմաստալից է, այլ ոչ թե քաոսային կամ պատահական: Հետագայում այնպիսի փիլիսոփաներ, ինչպիսիք են Փիլոն Ալեքսանդրացին և Մայմոնիդեսը, պնդում էին, որ արարչագործությունն արտացոլում է աստվածային իմաստությունն ու բանականությունը:

Հին Կտակարանը նաև սովորեցնում է, որ մարդիկ ստեղծված են Աստծո պատկերով. «Մարդ ստեղծենք՝ ըստ մեր պատկերի և նմանության.... Եվ Աստված, ըստ Իր պատկերի, ստեղծեց մարդուն: Ըստ Աստծո պատկերի՝ ստեղծեց նրան» (Ծննդ. 1:26, 27):

Այս գաղափարը մեծ ազդեցություն ունեցավ հրեական բարոյագիտության վրա, քանի որ հաստատում էր յուրաքանչյուր մարդու արժանապատվությունն ու արժեքը: Փիլիսոփաները այս համարը մեկնաբանեցին որպես ապացույց այն բանի, որ մարդիկ ունեն բանականություն, բարոյական պատասխանատվություն և հոգևոր արժեք:

**Բարոյական օրենք և արդարադատություն:** Թորան Աստծուն ներկայացնում է ոչ միայն որպես Արարչի, այլև Օրենսդրի, որ սահմանում է մարդկային կյանքի բարոյական սկզբունքները: Տասը պատվիրանները դարձան հրեական բարոյական փիլիսոփայության և հասարակական կյանքի հիմքը:

Օրինակ՝ Ելք գրքի 20-րդ գլուխը պարունակում է այնպիսի պատվիրաններ, ինչպիսիք են՝ մի՛ սպանիր, մի՛ գողացիր, սուտ մի՛ վկայիր քո մերձավորի դեմ:

Այս պատվիրանները սովորեցնում էին, որ բարոյականությունը հիմնված է աստվածային արդարադատության վրա և վերաբերում է կյանքի բոլոր ոլորտներին: Հրեա փիլիսոփաներն օրենքը դիտարկում էին որպես կանոնների ամբողջություն և այն համարում անհատների և հասարակության միջև արդարության ու ներդաշնակության ուղի:

Հին Կտակարանի մարգարեները նույնպես շեշտում էին արդարադատությունն ու կարեկցանքը: Ամոս մարգարեն դատապարտում է սոցիալական անհավասարությունը՝ հայտարարելով. «Թող հորդի արդարադատությունը ջրի պես, և արդարությունը՝ անհուն հեղեղի պես» (Ամոս 5:24):

Նմանապես՝ Միքիա մարգարեն բարոյական պատասխանատվությունն ամփոփեց հետևյալ խոսքերով. «Ի՞նչ է Տերը պահանջում քեզանից. արդարություն գործել, սիրել ողորմությունը և պատրաստ լինել Տիրոջ՝ քո Աստծո հետևից գնալու» (Միքիա 6:8):

Այս ուսմունքներն ուժեղ ազդեցություն թողեցին հրեական էթիկական փիլիսոփայության վրա՝ ընդգծելով, որ ճշմարիտ կրոնը պետք է կապված լինի ոչ միայն ծեսերի, այլև արդարության, ողորմության և բարոյական վարքի հետ:

**Իմաստությունը և կյանքի իմաստը:** Հին Կտակարանի իմաստասիրական գրքերը նույնպես խոր ազդեցություն ունեցան փիլիսոփայական մտորումների վրա: Առակաց գիրքն իմաստությունը կապում է բարոյականության և Աստծո հանդեպ երկյուղի հետ. «Տիրոջ վախը իմաստության սկիզբն է» (Առակ. 9:10):

Հրեա մտածողներն իմաստությունը մեկնաբանում էին որպես աստվածային պարգև և մարդկային ձգտում: Այս առումով ժողովողի գիրքն առաջ է քաշում ավելի փիլիսոփայական և գոյաբանական թեմաներ: Այն հարցականի տակ է դնում կյանքի իմաստը և աշխարհիկ հաջողության ժամանակավոր բնույթը. «Ունայնություն ունայնությունների, ամեն ինչ ունայն է» (Ժող. 1:2):

Այս հայտարարությունն արտացոլում է խոր մտորումներ մահկանացության և մարդկային սահմանափակումների վերաբերյալ: Ժողովողը սովորեցնում է, որ միայն նյութական նվաճումները չեն կարող ապահովել երկարատև իմաստ՝ խրախուսելով խոնարհությունը և հոգևոր գիտակցությունը: Իսկ տառապանքի խնդիրն ամենահզոր կերպով ուսումնասիրվում է Հոբի գրքում: Հոբը, Աստծուց վկայված լինելով իբրև արդար, շատ է տառապում՝ չնայած Աստծո հանդեպ իր հավատարմությանը. «Տերը տվեց, և Տերը վերցրեց. թող գովաբանվի Տիրոջ անունը» (Հոբ 1:21):

Հրեա փիլիսոփաները հաճախ խորհրդածում էին Հոբի մասին, երբ քննարկում էին աստվածային արդարադատության և մարդկային տառապանքի միջև եղած կապը: Գիրքը դարձավ կարևոր հիմք նաև թեոդիցիական քննարկումների համար:

**Մահ և հանդերձյալ կյանք:** Հին Կտակարանը մեծ ազդեցություն է ունեցել նաև մահվան, հոգու և հանդերձյալ կյանքի մասին հրեական փիլիսոփայական պատկերացումների վրա: Ի տարբերություն որոշ հին կրոնների, որոնք մանրամասն նկարագրում էին հանդերձյալ կյանքը, Աստվածաշունչը մահվան մասին խոսում է ավելի բարդ և երբեմն խորհրդանշական լեզվով: Հրեա փիլիսոփաները հետագայում մեկնաբանել են աստվածաշնչյան այս պատկերացումները և մշակել ավելի խոր ուսմունքներ հոգու անմահության, աստվածային դատաստանի և հավերժական կյանքի մասին:

Հին Կտակարանի ամենավաղ գրքերում մահը հաճախ ներկայացվում է որպես մարդկային գոյության բնական մաս: «Ծննդոց»-ում Ադամի և Եվայի՝ Աստծուն չհնազանդվելուց հետո մահը դառնում է մարդկային կյանքի տրամաբանական վախճանը. «Քանի որ հող ես, հողը էլ դառնաս» (Ծննդ. 3:19): ➥ էջ 8

# Սուվորովը՝ գեներալիսիմուսը և սրբակենցաղ այրը

*«Սիրում եմ իմ մերձավորին, իմ ողջ կյանքում չեմ դժբախտացրել և ոչ մի հոգու, ոչ մի մահապատժի դատավճռի տակ ստորագրությունս չեմ դրել, ոչ մի միջատ իմ ձեռքով չի սատկել: Փոքր էլ եմ եղել, մեծ էլ, երջանկության տեղատվության և մակընթացության ժամանակ ապավինել եմ Աստծուն և անսասան մնացել, ինչպես ներկայումս»*

*(Ալեքսանդր Սուվորով):*

Ռայսօր ողջ աշխարհում չի նվազում ռուս զորահրամանատար, գեներալիսիմուս Ա. Սուվորովի (1730—1800) համբավը: Նրա քաջագործությունները և 60-ից ավելի հաղթանակները, ռազմական հանճարը և մարտավարությունը, նորամուծությունները ռազմարվեստում, հիացմունք առթելով, ուսումնասիրվում են աշխարհի ամենատարբեր ռազմական ակադեմիաներում և ուսումնարաններում: Բայց քչերը գիտեն նրա՝ մայրական կողմից հայկական ծագման մասին. մայրը՝ վաղամեռիկ Ավդոտիա Ֆեդոսեևնա Մանուկովան, ուղղափառություն ընդունած հայկական ազնվական ընտանիքից էր սերում: Ժամանակակիցներից ոմանք Սուվորովի աշխույժ ու ժիր բնավորությունը հենց հայկական ծագմանն էին վերագրում. «Ալեքսանդր Վասիլևիչի զինվորական կատակներում հստակ երևում է կովկասյան կատակախոսությունը»,— նկատում է Ն. Վիլմոնտը: Կարևոր փաստ է նաև անվանի զորահրամանատարի՝ Հովհաննես Լազարյանի և արքեպիսկոպոս Հովսեփ Արղության-Երկայնաբազուկի հետ գործուն մասնակցությունը՝ Հայաստանն ազատագրելու և հայկական պետականություն ստեղծելու ծրագրին, ինչպես նաև կյանքի չկոչված՝ Եկատերինա թագուհու կողմից Հայաստանն ազատագրելու գործում Սուվորովին զորահրամանատար նշանակելու իրողությունը: Բայց, ցավոք, հայ իրականության մեջ անհայտ են մնացել ռուս զորահրամանատարի հոգևոր նկարագիրը, ջերմեռանդ հավատքը, բարեպաշտությունն ու անձնուրաց սերն առ Աստված ու հայրենիք:

Ռուս ազնվական, գեներալ Վասիլի Սուվորովի ընտանիքում ծնված Ալեքսանդրը կարճահասակ, վտիտ, հիվանդոտ և ոչ բարեկազմ երեխա էր: Բայց արդեն փոքրուց ի հայտ էր գալիս նրա հզոր ոգին. մագլցում էր բարձրաբերձ ծառեր, թեթև հագնված՝ նժույգի վրա սլանում դաշտերում ու արտերում՝ անկախ եղանակից՝ անձրևոտ լիներ թե քամոտ, ցուրտ թե շոգ, լողանում սառցե ջրում, ուստի հաճախ էր հիվանդանում, բայց չէր էլ դադարեցնում իրեն կոփել և երազում էր միմիայն ռազմական ծառայության մասին՝ այդպես շարքային զինվորականից հասնելով մինչև զինվորական բարձրագույն կոչման:

Մանկուց դաստիարակվել է քրիստոնեական ոգով, միշտ մասնակցել աստվածապաշտական արարողություններին, պահել բոլոր պահքերը, հանապազ աղոթել և այս բարեպաշտական ոգով ու հավատարմությամբ առ Ռուս Եկեղեցի ապրել մինչև կյանքի վերջին շունչը, ինչը և նրա հանճարեղության աղբյուրն էր, նրա հաջողությունների բուն պատճառը: Այնպես որ ակամայից հիշում ես մեր հին ասացվածքներից մեկը՝ «Ինչ նախշը քարի վրա, այնպես էլ դաստիարակությունը մանուկ հասակում»: Քաջատեղյակ Ավետարանին և պատվիրաններին՝ նա հանապազ հիշում էր Քրիստոսի խոսքերը՝ «Առանց Ինձ ոչինչ անել չեք կարող» (Հովհ. 15.5), և իր ամենայն հաղթանակ և հաջողություն վերագրում Աստծուն: Ուստի հաղթանակից հետո աճապարում էր եկեղեցի՝ գոհաբանական աղոթքներ վերառաքելու երկինք, ապա և բոլոր սպաների հետ մասնակցում զոհվածների հոգեհանգստյան արարողությանը: Նույնիսկ պարգևները հերոսներին եկեղեցում էր հանձնում:

Սուվորովի մշտական հորդորները զինվորներին չէին սահմանափակվում միայն աղոթքների սերտման ու եկեղեցի հաճախելու պահանջով. նա բարոյական սկզբունքներ էլ էր դաստիարակում՝ միշտ սովորեցնելով, որ հաղթանակը Աստծուց է շնորհվում, և այն կերտողը անմահ հոգին է, որ աստվածապաշտությունը հեռու է պահում մեղքից, որ առանց առաքինության չկան ո՛չ փառք, ո՛չ պատիվ. «Ամեն ինչ սկսե՛ք Աստծո օրհնությամբ.... Աղոթի՛ր Աստծուն, զի Նրանից է հաղթանակը»: Զորահրամանատարը ուսուցանում էր թշնամի լինել նախանձին, ատելությանն ու վրեժխնդրությանը, խորշել ստից, ներել մերձավորի և չներել սեփական սխալները, չվհատվել ու չհուսահատվել, գթասիրտ լինել պարտված թշնամու նկատմամբ և անտեղի ոչ ոքի չսպանել, քանի որ «հաղթողին մեծահոգություն է վայել»: Զորահրամանատարը զինվորներին, որոնց իր մարտական եղբայրներն էր համարում, միշտ հիշեցնում էր, որ «անաստվածությունը կլանում է պետություններ ու թագավորներ, հավատ, իրավունք ու բարի բարքեր», և որ «անհավատ զորք ուսուցանելը նույնն է, ինչ ժանգոտ երկաթ սրելը»: Նա զինվորների հետ միասին Պողոս-Պետրոս փայտաշեն եկեղեցու կառուցմանը մասնակցեց՝ իր իսկ ձեռամբ խաչյալ Փրկչով խաչ կերտելով:

Սուվորովի հերոսությունները, ականատեսների վկայությամբ, հեռու չէին հրաշագործություններից: Այսպես՝ մի անգամ Տրիբեյի մոտ մարտի ամենաօրհասական պահին, երբ այլևս ոչ մի մարտավարություն չէր օգնում, նա բոլորի աչքի առաջ նժույգից իջավ և մի քանի րոպե երկրպագությամբ աղոթեց, ապա այնպիսի կարգադրություններ տվեց, որոնց շնորհիվ մարտը հաղթանակով պսակվեց:

Իր սպաներին ու զինվորներին նա դաստիարակում էր Աստծո կամքին հնազանդվելու և Աստծուն ի սրտե ապավինելու ոգով, ուսուցանում ծառայել ոչ թե վախով, այլ խղճմտանքով: Նրանց հորդորում էր հեռու մնալ մասոնությունից, կեղծ ուսմունքներից, հեղափոխական գաղափարներից: Միշտ քննության էր ենթարկում զինվորներին՝ խճճող հարցեր տալով և արագ պատասխաններ ակնկալելով, ինչի շնորհիվ զարգանում էր զինվորների արագ մտածողությունը՝ այնքան անհրաժեշտ մարտի ժամանակ, ինչպես և առտնին կյանքում կողմնորոշվելու համար: Սուվորովյան թևավոր ասույթ դարձած խոսքը՝ «Դժվար է վարժանքը, հեշտ՝ մարտը» (նախնական տարբերակն է՝ «Հեշտ է վարժանքը, դժվար՝ արշավանքը, դժվար է վարժանքը, հեշտ՝ արշավանքը») թարգմանվել է բազում լեզուներով և կիրառվում է ոչ միայն ռազմական բնագավառում:

Սուվորովը թեև հարգալից վերաբերմունք ուներ կաթոլիկության նկատմամբ, բայց ճշմարիտ էր համարում միայն Ուղղափառ եկեղեցին: Չեխ բողոքական քարոզիչ և գաղափարախոս Յան Հուսին խարույկի վրա այրելու առթիվ ասում էր. «Գոհություն Աստծուն, որ ոչ մի բողոքական տենդախտ չսողոսկեց մեր Հայրենիք. մեր կրոնը մեզանում միշտ էլ մաքրամաքուր է եղել»:

«Ձենքից ոչ պակաս թշնամուն հարկ է պարտության մատնել մարդասիրությամբ,— ուսուցանում էր Սուվորովը:— ....Ահա իմ մարտավարությունը՝ քաջություն, արիություն, խորաթափանցություն, կանխատեսություն, կարգուկանոն, չափավորություն, կանոնադրություն, աչքաչափ, արագություն, բուռն գրոհ, մարդասիրություն, խաղաղություն, մոռացություն....»: Մեծահոգի վերաբերմունք ուներ գերիների նկատմամբ. այլևս պատերազմի չմասնակցելու խոստում ստանալով՝ երբեմն ազատ էր արձակում նրանց՝ իր իսկ ձեռամբ ստորագրված պահպանագրերով:

Սուվորովի արժեհամակարգում հավատից հետո երկրորդ տեղում հայրենասիրությունն էր: Նրա անկեղծ, հիացմունքով առլեցուն հավատը Ռուսիայի նկատմամբ կայծի նման բոցավառում էր զինվորների սրտերը: Ռազմիկներն անձնվիրաբար հետևում էին իրենց հրաշագործ հրամանատարին՝ նույն ոգով համակվելով: Սուվորովը նույնքան ջերմեռանդ հավատ էր ընծայում նաև ռուս զինվորի՝ «հրաշք հսկայի» հանդեպ, նրա ուժի, հավատքի, տոկունության, քաջության, հավատարմության, առ հաղթանակը կամքի, հնարամտության, ամեն պարագայում դիմակայելու և հաղթելու ունակության հանդեպ:

Զինվորներն ակնածում էին իրենց զորավարից, առասպելներ հյուսում նրա մասին և անսահմանորեն վստահում նրան, հավատում էին, որ նա ի զորու է աղոթքի ուժով հաղթանակ ձեռք բերելու, որ Աստծուց շնորհ ունի. զգում է թշնամու ծուղակները, տեսնում ապագան, անվնաս մնում գնդակներից, և որ նրան երկնային ուժերն են օգնում: ➥ էջ 8

# *Իսահակ եպս. Պողոսյան.* «Հայոց ինքնության արեգակը»

## *(վիպակ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի մասին)*

### Մեսրոպը՝ վարդապետ

*«Արեգակն արդարութեան,*
*Ծագեա ի հոգիս մեր*
*Զլոյս ճշմարտութեան եւ ողորմեա՛»*
*(Շարակնոց):*

Սահակ հայրապետի հետ ունեցած հոգեշահ զրույցից օրեր անց Մեսրոպը վերադարձավ հայրենի գյուղ և ծնողներին պատմեց եղելությունը: Իմանալով որդու որոշման մասին՝ Աղավնին երկար լռեց: Նա շատ անգամ էր տեսել, թե ինչպես է որդին որևէ վանք գնալու նպատակով՝ կտրում-անցնում հարյուրավոր մղոններ, օրեր շարունակ քաղցած մնում, շատ անգամ էր անթաքույց ուրախությամբ անդրադարձել որդու ապագային, բայց երբևէ չէր պատկերացրել, որ նա կարող է հոգևորական դառնալ: «Բայց չէ՞ որ շարունակ ասում էր, թե զինվորական է դառնալու»,— ինքն իրեն ասում էր նա:

Վարդանը, որ որդուն մեծացրել էր որպես ապագա զինվորի ու իմաստասերի, լուրը լսելուն պես նստեց տան շեմին, լուռ հայեց շուրջը, ապա՝ որդուն, հետայնու՝ Տարոնի հպարտ լեռներին ու կարոտագին ասաց.

— Աղավնի՛, մեր որդին լեռների զավակ է: Մենք նրան ո՛չ մեր կողքին, ո՛չ ապարանքներում չենք կարողանալու պահել: Նա ծնվել է գիտության ու մեծամեծ գործերի համար:— Ապա դառնալով Մեսրոպին՝ վրա բերեց,— զավա՛կս, դու արդեն հասուն մարդ ես, և ինքդ կարող ես որոշել քո կյանքի ուղին: Մենք միայն կարող ենք ուրախանալ քո ձեռքբերումներով և աջակցել քեզ, ինչով կարող ենք: Թող բարի Աստված օրհնի քո բռնած ճանապարհը:

Աղավնին՝ ձեռքը սրտին, մեղմ հավելեց.

— Աստված թող պահպանի քեզ: Եթե այդ ճանապարհն ես ընտրել, թող մեր լեռները քեզ ամուր վահան լինեն, իսկ նախնյաց հայացքները հարթեն գալիք դժվարություններդ:

Այս խոսքերով ծնողներն իրենց ներսում խաղաղություն գտան և խնջույք արեցին: Մեսրոպն արժանացավ ընտանիքի անդամների անմնացորդ զորակցությանն ու գուրգուրանքին:

Երբ վանք մտավ, հասկացավ, որ մե՛ծ, շատ մեծ ու անփոխարինելի խաղաղություն է գտել: Մի բան, որ անընդհատ պակասում է աշխարհական կյանքում: Բայց նրա մուտքով վանքի խաղաղությունն էլ նոր բովանդակություն ստացավ: Մանուկ հասակից հոգու խորքում ունեցած անտես, բայց աննահանջ կանչը հիմա լիությամբ ու լրիվությամբ արձագանքում էր նրա ներսում՝ առավել պարզ, հստակ ու ամբողջական: Եվ մի առավոտ, երբ արևը շուտով ցրելու էր լեռների գագաթներին հյուսված մշուշը, Մեսրոպը մոտեցավ Սահակ հայրապետին: Նրա հայացքը խոնարհ էր, բայց վճռական:

— Ի՞նչ կա, որդի՛,— մեղմ, բայց հաստատուն ձայնեղանակով դիմեց կաթողիկոսը:

— Հայրապե՛տ, ինձ թվում է՝ ես այլևս պատրաստակամ եմ: Եթե կամենաք, օրհնեք իմ ճանապարհը:

Հայրապետը, մի պահ թողնելով ձեռքի մագաղաթե գիրը, հայացքը հառեց երիտասարդին: Մեսրոպի զուլալ աչքերի մեջ նա տեսավ ապագա վարդապետի անօրինակ խաղաղությունը, արևային պայծառությունն ու լեռնային համառությունը: «Իրապես որ այս երիտասարդին խոստումնաշատ ապագա է սպասում»,— մտածեց նա:

— Իմացիր, որ դու պետք է ոչ միայն գիտուն լինես, այլ նաև հոգով զորավոր, որպեսզի կարող լինես ճանաչել ճշմարտությունը: Եթե սիրտդ Աստծուն է փնտրում, ոչ մի մարդ չի կարող կանգնեցնել քեզ: Բայց ուզում եմ, որ նաև գիտենաս՝ հաճախ կարող է թվալ, թե ընտրությունը մերն է, բայց Աստված է, որ ընտրում է թե՛ մեզ և թե՛ մեր ճանապարհը՝ Իր գործերի համար: Դյուրին ճամփա չէ Աստծուն գործակից լինելը: Սակայն եթե հաջողես, եթե միայն հավատարիմ գտնվես, կզարդարվես աստվածապարգև խաղաղությամբ և կհաղթես ամենուր ու ամենքին:

Մեսրոպը խոնարհ գլուխ տվեց հայրապետին և հետևյալ օրվանից սկսեց էլ ավելի խորամուխ լինել կրոնական ուսուցումների, իմաստասիրական ընթերցումների, աղոթքի և խոկման ծովածավալ իրողությունների մեջ:

Ձեռնադրությունից հետո մեկնեց Գողթն գավառ՝ այնտեղ, ուր լեռների խոհուն լռությունն ու գետերի քաղցր շառաչը ծրարած պահում էին վաղնջական ժամանակների շունչը, որտեղ գունաթափված առավոտները հենվում էին քարե ողորկ կիրճերին ու հեքիաթ ասում, իսկ արևածագը բացվում էր, ինչպես հնադարյան մատյան՝ ոսկեփոր տառերով: Ճանապարհը երկար էր ու քարքարոտ, բայց նրա ոտքերը զարմանալիորեն չէին հոգնում:

Իշխան Շաբիթը՝ խոհեմ և իմաստուն մի մարդ, նրան ընդունեց մեծամեծ պատիվներով, իսկ զրույցի վերջում հավելեց.

— Այստեղ՝ մեր հնավանդ հողի վրա, երբեմնի մթության ստվերները խոր արմատներ են գցել: Եվ միայն պայծառ գիտելիքն ու սրտաբաց խոսքը կարող են սրբել անգիտության աղջամուղջն ու շիտակություն հաստատել: Այդ բոլորով հանդերձ՝ Գողթնի քնարական աշխարհը բաց է քո գործի համար: Դու միայն հաջողիր...

Մեսրոպն այստեղ հիմնեց դպրոցներ ու համայնքներ: Նրա խոսքը մարդկանց հոգիներում ծլարձակեց, բողբոջեց ու պտուղ առավ՝ անաղմուկ ու անխուսափելի: Ժողովուրդը սիրեց նրան: Մաշտոցը ոչ միայն քարոզում էր, այլև ուսանում, բժշկում, մխիթարում ու բարձրացնում, ինչպես արևի շողն է ցրում խունացած ամպերի տխրությունը: Իսկ գիշեր ժամանակ նստում էր ճրագի լույսի տակ, առջևը՝ հին ձեռագրերի պատառիկներ: Եվ օր օրի նրա միտքն ավելի էր հղկվում ու հասունանում: Այստեղ քարոզելիս էր, որ Մեսրոպ վարդապետը մի անգամ էլ զգաց ու համոզվեց, որ «Կյանքի խոսքը» որպեսզի շունչ առնի ու մնայուն դառնա, ոչ մի դեպքում չի կարող մատուցվել օտար լեզուներով, այլ մայրենի, իսկական ու սեփական: Այդպես միայն խոսքը գործի կվերածվի, ապրումի ու կենդանության:

Գողթնից հետո նա ուղևորվեց Սյունիք՝ քարքարոտ լեռներով ու անտառապատ ձորերով հարուստ հայոց աշխարհի մեկ այլ տեղանք: Այստեղ երկինքը կարծես ցած էր իջնում, որպեսզի դիպչի ժայռերին, իսկ ժայռերը՝ լուսաբացին՝ արծաթագույն, կեսօրին՝ արևի ծով, երեկոյան՝ կարմրավուն բոց, բարձրանում էին՝ երկնքի թափանցիկ խաղաղությանը հաղորդակից լինելու համար: Քամին այստեղ սուր սուլոցներով հուժկու սահում էր ձորերով, և ամեն մի սուլոց կարծես գերանդին սրող վարպետի ձեռքից ելնող զարկ լիներ, մարտի պատրաստվող զինվորի սրի ձայն: Իսկ գիշերները Սյունիքը դառնում է աստղերի սրբավայր: Սյունեցիները՝ լեռ ու քարից կոփված մարդիկ, Վաղինակ իշխանի առաջնորդությամբ հետզհետե սկսեցին հավաքվել նրա շուրջը:

Հայրապետն ուշադիր բավականությամբ հետևում էր Մեսրոպի ընթացքին, և մի երեկո նա նամակ ստացավ, որ Վաղարշապատում իր կարիքն ունեն:

Վերադառնալով՝ Մաշտոցն իր հետ բերեց նաև Դանիելյան նշանագրերը, որոնց արդեն ծանոթ էր բավական ժամանակ: Վաղարշապատում նա սկսեց առաջին համարձակ քայլերը՝ թարգմանությունները, ուսուցումներն ու յուրացրած գիտելիքների ավանդումը: Եվ ապրած ամեն մի օր նրան մոտեցնում էր իր երբեմնի բաղձանքին...

*Շարունակելի*

# *Համբարձման տոնի ժողովրդական ավանդույթները*

*«Ապա նրանց տարավ հանեց մինչև Բեթանիա և բարձրացնելով Իր ձեռքերը՝ օրհնեց նրանց: Եվ մինչ Նա օրհնում էր նրանց, բաժանվեց նրանցից և դեպի երկինք էր վերանում: Իսկ նրանք երկրպագեցին Հիսուսին և մեծ ուրախությամբ վերադարձան Երուսաղեմ: Եվ միշտ տաճարում էին, գովաբանում և օրհնաբանում էին Աստծուն»*

*(Ղուկ. ԻԴ:50—53):*

Հայ եկեղեցական տոներից համաժողովրդական տոնախմբություն է դարձել նաև Համբարձումը, որը մինչև այսօր էլ սիրում է ժողովուրդը: Այն հայտնի է մի շարք անուններով՝ Համբարձում, Ջան Գյուլում, Վիճակի օր, Կաթնապուրի օր և այլն: Դրանցից «Վիճակի օր» անվանումը կապվում է տոնի քրիստոնեական խորհրդի հետ: Համաձայն «Գործք առաքելոց»-ի՝ Հիսուսի համբարձումից հետո, վերադառնալով Երուսաղեմ, առաքյալները Հուդայի փոխարեն վիճակի միջոցով ընտրեցին տասներկուերորդին:

Համբարձման տոնը Հայաստանի գավառներում նշվել է յուրօրինակ և տարբեր: Ընդունված էր տոնի օրը մատաղ անել, ուխտի գնալ, երգով-պարով զվարճանալ: Ցանկացած բնակավայր ուներ Համբարձման իր ուխտավայրը: Ամենահայտնի ուխտավայրերից են Արա լեռան վրա գտնվող Ծաղկեվանքը, Վարանդայի Սուրբ Չինարիները և այլն:

Ծաղկեվանքի ուխտն սկսվում է Համբարձման տոնի օրը և շարունակվում մինչև Վարդավառ: Մինչև վերջերս մարդիկ ոտքով գալիս էին այս մատուռ և այնտեղ նշում Համբարձումը: Վրաններ էին խփում մատուռի մոտակայքում և գիշերում այնտեղ: Հավատում էին, որ Ծաղկեվանքը մուրազատուր էր: Չբերին երեխա էր տալիս, կույրին՝ տեսողություն, բուժում էր ծաղիկ, կարմրուկ հիվանդությունները: Ծաղիկ կամ կարմրուկ հիվանդություններից իրենց երեխաներին զերծ պահելու համար կանայք չորեքշաբթի օրը ոչ մի գործ չէին անում: Արգելված էր լվացք անելը, կարելը, հաց թխելը և այլն:

Երբ երեխա չունեցող զույգը գալիս էր Ծաղկեվանք, նրա խնդրանքը կատարվում էր: Ծնողները փոքրիկի մազերը յոթ տարի չէին կտրում: Սա համարվում էր ուխտի նշան: Ուխտի գալիս էին աղոթքներով ու Համբարձման տաղիկներ երգելով: Մատուռի մոտակայքում էլ մատաղ էին անում և տալիս առաջին պատահած մարդուն: Այսօր էլ Արագածոտնի թեմի հոգևորականները տոնի նախորդող օրը կատարում են հսկում, իսկ առավոտյան՝ պարտադիր Ս. Պատարագ:

Համբարձման տոնը չէր սկսվում հենց հինգշաբթի օրը: Մինչև տոնը բավականին նախապատրաստություններ էին կատարում: Երիտասարդ աղջիկները չորեքշաբթի օրը՝ վաղ առավոտյան, դեռ արեգակը չծագած, գնում էին դաշտերը կամ սարերը՝ կճուճի մեջ յոթ աղբյուրից ջուր լցնելու, յոթ քար և տերև լցնելու: Աղջիկներն ամբողջ գիշեր թաքցնում էին այդ կճուճը, որը ծածկված էր կարմիր շորով և ծաղիկներով: Եթե տղաներից ինչ-որ մեկը գողանար այդ կճուճը, աղջիկներն ստիպված էին լինելու փրկագին վճարել: Հինգշաբթի օրը երիտասարդները շրջում էին տնետուն և իրենց հավաքած ծաղկեփնջերը նվիրում մարդկանց: Դրա դիմաց ժողովուրդը բնամթերք կամ գումար էր տալիս պատանիներին: Խումբը իր հետ պտտեցնում էր նաև վիճակի համար նախատեսված սափորը, որի մեջ ամեն մեկն իր անձնական իրերից էր գցում՝ որպես նշան: Հետո այդ սափորը տանում էին եկեղեցի, որ օրհնվեր: Տնետուն պտտվելուց հետո աղջիկներն անցնում էին վիճակի ծեսին:

Մի փոքրիկ աղջիկ, հարսի շորեր հագած, հերթով հանում էր իրերը, և խումբն սկսում էր «Ջան Գյուլումի» խաղիկ ասել. այս խաղիկի միջոցով էլ որոշվում էր տվյալ աղջկա բախտը: Հենց այս տեսարանն է նկարագրում Հ. Թումանյանը «Անուշ» պոեմում, ուր Անուշի տխուր բախտը գուշակվում է հենց Համբարձման խաղիկի միջոցով: Այս օրինակը փաստում է, որ Համբարձման տոնը հավատքի առումով մեծ նշանակություն է ունեցել հայոց մեջ: Այս տոնը բնորոշվում է իր մոգական, կախարդական հատկանիշներով:

Համբարձման գիշերվա վերաբերյալ ամենուր տարածված էր «Լեյլի և Մեջլուն» սիրավեպը: Ծնողների պատճառով իրենց մուրազին չհասած սիրահար զույգը՝ Լեյլին ու Մեջլունը, խնդրում են Աստծուն իրենց աստղ դարձնել և Իր մոտ՝ վերև տանել: Աստված կատարում է նրանց խնդրանքը, և տարին մեկ անգամ՝ Համբարձման գիշերը, այդ աստղերը երկնակամարի տարբեր կողմերից գալիս միանում, ջերմ համբույրով գրկախառնվում են և դարձյալ վերադառնում իրենց տեղերը: Դրա համար էլ շատերը գիշերը չէին քնում և հետևում էին աստղերի շարժին: Համարում էին, որ այդ գիշեր իրենց պահած երազանքը կկատարվի:

Համբարձման վիճակի արարողությունը հիմնականում կատարում էին եկեղեցիների բակերում: Աղջիկներն առանձին խաչաձև մեծ փունջ էին պատրաստում եկեղեցու համար: Այս փունջն անվանվում էր ծաղկամայր և դրվում կճուճի մեջ:

Բոլոր ծիսակատարությունների ավարտից հետո սկսվում էր մեծ տոնակատարություն: Ամենքը պարտավոր էին այդ օրը կաթնապուր եփել. նույնիսկ այն որպես մատաղ էր դիտարկվում: Մինչև Համբարձում ոչ ոք կաթնապուր չէր եփում: Կաթնապուր եփելուց հետո այն շերեփով շաղ էին տալիս դաշտերի և արտերի ուղղությամբ, որ առատ բերք ու բարիք լիներ: Այդ օրը սեղաններին դրվում էին ընկույզ, մեղր, չորացրած մրգեր, իսկ որոշ վայրերում խմորեղեն էին պատրաստում և զարդարում ծաղիկներով: Ծաղիկներով զարդարում էին նաև տների մուտքերը, ամրացնում գոմի և մարագի վրա, դնում խնոցու վրա, ինչպես նաև ծաղիկներով կերակրում կովերին, որ կաթնառատություն լինի:

Համաժողովրդական այս եզակի տոնը, կարելի է ասել, պահպանվել է անփոփոխ ձևով և հայոց մեջ նշվում է մեծ շուքով և ուրախությամբ: Ամեն գավառ ունեցել է «Ջան Գյուլումին» նվիրված իր երգը: Ահա Շիրակի տարբերակը.

*Համբարձում է, գարուն է,*
*Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,*
*Մեր վիճակը սիրուն է,*
*Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:*
*Էս գիշեր լուսը տեսա,*
*Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,*
*Իմ յարը դուսը տեսա:*
*Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:*
*Կայնել ես վարդի հովին,*
*Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,*
*Քամին տա ծոցիդ մովին:*
*Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:*
*Ամեն քեզի տեսնելիս,*
*Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,*
*Համ՝ Համբարձում, համ՝ Ջատիկ:*
*Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:*
*Աստված կյանք տա ամենքին,*
*Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,*
*Ուրախ կլնի էս տարին:*
*Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:*
*Մանի ասեմ ու շարեմ,*
*Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,*
*Լցնեմ տոպրակն ու կարեմ:*
*Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:*

Այս նույն երգը Արագածոտնում (և ոչ միայն) երգվում էր այլ տարբերակով, որի մեջ աղջիկները երգում են իրենց եղբոր գովքը, որ սարում է:

Այսպիսով՝ Համբարձման տոնը միաձուլում է քրիստոնեական և ժողովրդական տարրերը, որի շնորհիվ էլ սիրելի է հայ ժողովրդի համար:

**Գոհար ՂԱԶԱՐՅԱՆ**

# Սուվորովը՝ գեներալիսիմուսը և սրբակենցաղ այրը

➥ էջ 6

Այսպես՝ լեհական պատերազմի ժամանակ հրամայեց երկու հեծյալ գնդերի տեղակայվել թավ անտառում, ուր, ի զարմանս հրամանատարների, մինչև իսկ հետևակն ազատ տեղաշարժվելու ունակ չէր: Եվ արագ՝ սուվորովյան կերպ ավարտվեց ճակատամարտը. հակառակորդի մի քանի հազար զինվորներն անտառ նետվեցին, ուր և անարյուն գերվեցին: Իսկ սպաներից մեկը բացականչեց. «Հիրավի, անըմբռնելի է Սուվորովը»:

Սուվորովը՝ իրապես այդ անըմբռնելի այրը, ևս մեկ անգամ «զարմացրեց» ռուս-թուրքական պատերազմի ժամանակ՝ 1787 թ. աշնանը Քինսբուրնսյան թերակղզում տեղի ունացած ճակատամարտում: Թուրքերը մտադրվել էին գրավել ամրոցը՝ ռազմանավերով մոտենալով ափին: Դա հոկտեմբերի 1-ին էր՝ Սուրբ Աստվածածնի տոնին: Սուվորովը եկեղեցում աղոթում էր, երբ նրան զեկուցեցին թշնամու դեսանտի անսպասելի ափհանման մասին, բայց նա հրամայեց կրակ չբացել և չխանգարել թուրքերին: Զորավարն սպասեց արարողության ավարտին, ապա խնդրեց հաղթանակի համար աղոթքներ վերառաքել: Միայն այն բանից հետո, երբ արարողությունն ավարտվեց, և երբ հակառակորդն արդեն 100 մետր հեռավորության վրա էր գտնվում, հրամայեց բոլոր հրանոթներից համազարկային կրակ բացել: Այդ հրաշագործ հաղթանակից հետո Սուվորովի մասին ռուսաց բանակում տարածվեց այն համբավը, որ նա երբեք մինչև հրեշտակների՝ երկնքում մատուցած Պատարագի ավարտը կռվի չի բռնվում:

Հաջորդ հրաշքը կատարվեց 1789 թ.՝ Ռիմնիկի մոտ տեղի ունեցած մարտի ընթացքում: Ըստ ավանդության՝ մարտի ամենաօրհասական պահին, երբ, թվում էր, ուժերն արդեն սպառված էին, Սուվորովին մի լուսե ձիավոր հայտնվեց, ինչ-որ բան ասաց և քար նետեց հակառակորդի ճամբարի ուղղությամբ: Այդ բանից հետո Սուվորովը, հակառակ ռազմարվեստի բոլոր կանոններին, գրոհելու հրաման տվեց ռուսական զորքին բազմապատիկ գերազանցող թուրքական ուժերի վրա. հաղթանակը տարվեց գրեթե սուվորովյան սկզբունքի համաձայն՝ «զարմացնել ու հաղթել»: Այդ հաղթանակի համար Սուվորովը ռիմնիկյան կոմսի տիտղոսին արժանացավ:

Պակաս ուշագրավ չէ 1790 թ. անառիկ համարվող Իսմայիլի ամրոցի գրավումը: Փորձելով լիովին խուսափել արյունահեղությունից՝ Սուվորովը նախ իր հռչակավոր վերջնագիրը ներկայացրեց՝ «24 ժամ խորհրդածելու ժամանակ՝ հանձնվելու համար, ապա ազատություն, առաջին կրակոցները՝ արդեն անազատություն, իսկ գրոհը՝ մահ»: Ամբարտավան էր ամրոցի թուրք պարետի պատասխանը. «Ավելի շուտ Դունայի հոսքը կանգ կառնի, երկինքն էլ կընկնի երկրի վրա, քան ռուսները կգրավեն Իսմայիլը»: Պարետը, ինչպես հայտնի է, զոհվեց գրոհի ժամանակ, իսկ ռուս մարտիկները նրա սուրը Սուվորովին նվիրաբերեցին...

Իսկ երբ գահին նստեց Պավել Առաջինը, Սուվորովի համար ծանր օրեր սկսվեցին, քանի որ որպես արհեստավարժ և բանիմաց սպա՝ համարձակ կերպով հակառակում էր կայսեր՝ պրուսական ռազմարվեստի արհեստական և չմտածված ընդօրինակմանը («դիմափոշին վառոդ չէ, ոչ էլ կեղծամը՝ հրանոթ»), որով էլ ջղագրգռում էր կայսրին: Որպես պատիժ՝ 1797 թ. փետրվարին նրան ուղարկեցին Նովգորոդյան նահանգի իր իսկ Կոչանսկոե կալվածքը, որտեղ էլ ապրեց երկու տարի: Այստեղ նրան անսովոր խաղաղ կյանք էր սպասում, որը նա, այդուհանդերձ, անց էր կացնում իրեն բնորոշ կերպ: Արթնանում էր կանուխ առավոտյան, աճապարում եկեղեցի. իր ձեռամբ էին ղողանջում զանգերը: Ինքն էր հոգում երգչախմբի ծախսերը՝ ձայնակցելով հոգևոր երգասացությանը, գյուղի երեխաներին գրագիտություն էր սովորցնում, թերթեր կարդում, ուշի-ուշով հետևում Նապոլեոնի՝ Եվրոպայում ծավալած գործողություններին: Հեռատեսորեն կանխատեսում էր, որ եթե Նապոլեոնը չհեռանա ռազմական ոլորտից, որում առավելագույն չափով էր դրսևորվում նրա բազմակողմանի տաղանդը, հաղթող դուրս կգա, իսկ եթե «նետվի քաղաքական փոթորիկը», կկործանվի:

Սուվորովը մտադրվել էր իր կյանքն ավարտել Աստծուն ծառայելով, այսինքն՝ միաբանելով վանական ուխտին, և կայսրին այդ մասին խնդրագիր է ուղարկում: Սակայն կայսեր հրամանով՝ իտալական ռազմարշավին միացավ, քանզի Ռուսիան միացել էր հակաֆրանսիական դաշինքին: Դաշնակիցների թախանձանքով Պավել Առաջինը հենց Սուվորովին նշանակեց ֆրանսիական Դիրեկտորիայի (1795–1799 թթ. ֆրանսիական կառավարության անվանումը) գրաված Հյուսիսային Իտալիան ազատագրող զորքերի գլխավոր զորահրամանատար: Սուվորովը, իհարկե, իբրև հավատավոր քրիստոնյա, դեմ էր Ֆրանսիական հեղափոխությանը: Նա իր զինվորներին ասում էր. «Ֆրանսիացիները մերժեցին Քրիստոս Փրկչին և ոտնատակ տվեցին օրինավոր կառավարությունը: Սարսափեք նրանց այլասերվածությունից»: Կարճ ժամանակում ռուս զորահրամանատարի գլխավորությամբ մի քանի ճակատամարտերում փայլուն հաղթանակներ տանելով՝ Հյուսիսային Իտալիան ազատագրվեց: Հենց այդ օրերին ևս մեկ անգամ ի հայտ եկավ Սուվորովի արտասովոր կանխազգացության շնորհը: Ֆրանսիացիներից կաշառված խոհարարը երեք անգամ ճաշին նրան թունավորված կերակուր մատուցեց, բայց Սուվորովը լուռ նայում էր նրա աչքերին, մինչև որ վերջինս սարսափած հետ էր վերցնում ձեռք չտրված ափսեն: Դիրեկտորիան Սուվորովի գլխի համար չափազանց մեծ գումար էր խոստացել: Իմանալով այդ մասին՝ գլուխը շոշափելով ու կատակով ասում էր. «Մեղմ, Տեր, թանկ է», ինչից հետո հրամայում է ազատ արձակել ֆրանսիացի մի գերու, որին բարի երթ մաղթելիս ասում է. «Փոխանցիր քո Դիրեկտորիային, որ ես կաշխատեմ իմ գլուխը ինքս իմ ձեռքով տանել իրենց»:

Սուվորովը զինվորական երդման էությունը չէր ընկալում որպես պարզապես խոստում՝ պարտքի կատարումը կապանքող. «Մեն-մենակ տասը հոգու չես հաղթի. Աստծո օգնությունն է հարկավոր: Դա երդմամբ է պայմանավորված. մարտում դյուցազն կլինես, եթե նույնիսկ տանը ոչխար լինեիր, իսկ առանց դրա՝ տան ոչխար էլ կմնաս»: Զինվորական երդման՝ իբրև Աստծո հետ այդպիսի ուխտի մեկնությունը քաջալերում էր տկարներին ու փոքրոգիներին, որոնք հավատում էին, որ կռվի ժամանակ նրանց և՛ քաջություն կշնորհվի, և՛ զորություն:

1799 թ. սեպտեմբերը նշանավորվեց Սուվորովի՝ Ալպերի հերոսական անցմամբ, երբ նրա զորքը Ռիմսկի-Կորսակովի՝ ռուսաց կորպուսի հրամանատարի պարտությունից հետո հրաշքով դուրս եկավ շրջապատումից: Սուվորովի ալպյան ռազմարշավում ռուսական զորքը դրսևորեց մարդկային կարողությունները գերազանցող անհողդողդություն՝ պատմականորեն երբևէ չարձանագրված: Միայն ջերմեռանդ հավատքն առ Բարձրյալի պաշտպանություն օգնեց Սուվորովին և նրա զինվորներին՝ հաղթահարելու մարդկային ուժերը գերազանցող փորձությունները, որոնք բաժին ընկան նրանց այդ ռազմարշավի ընթացքում:

Ըստ իրենց՝ շվեյցարացիների՝ Ալպյան լեռներն անցնելը հրաշք էր: Սուվորովի և նրա զինվորների հայտնվելն ամպերից վեր՝ սառցեպատ և ցրտաշունչ բարձունքներում, մի այնպիսի արտասովոր երևույթ էր, որ մեր օրերում էլ շվեյցարացի հովիվների միջավայրում առասպել է շրջանառվում մի հրաշալի ծերունու մասին, որն անցկացրեց իր բանակը մի այնպիսի տեղով, ուր միայն արծիվներն են սավառնում, և քարայծերը՝ վազվզում:

«Նախախնամությունը,– ասում էր զորահրամանատարը,– մեզ ամպերի մեջ նետեց.... Գիտե՞ս արդյոք երեք քույրերին, որոնք անցկացրին մեզ լեռները: Նրանք են՝ Հավատը, Հույսը, Սերը, և Աստված նրանց հետ է» (Վերա, Նադեժդա, Լյուբով՝ տարածված կանացի անուններ են Ռուսիայում):

Կայսր Պավել Առաջինը նրան գեներալիսիմուսի (լատ.՝ գերագույն զորահրամանատար, բարձրագույն զինվորական կոչում՝ ռազմական մեծ ծառայությունների համար շնորհվող) կոչմանն արժանացրեց: Կայսրը նաև հրամայեց Սուվորովի կենդանության օրով նրա հուշարձանը կանգնեցնել:

1800 թ. գարնանը կանխազգալով իր մոտալուտ մահը՝ Սուվորովը հոգևոր երգ գրեց՝ ձոնված Հիսուս Քրիստոսին: Իսկ մահկանացուն կնքելուց առաջ Քրիստոսի նշխարքին հաղորդվելով՝ Սուվորովն արտասանում է իր վերջին խոսքերը. «Տևական ժամանակ էի ես փառքի հետևից ընկել. այդ ամենը երազանք է: Հոգու հանգստությունը Բարձրյալի գահի մոտ է»:

1800 թ. մայիսի 12-ին ռուս ականավոր զորահրամանատարին պատվով թաղեցին Սանկտ Պետերբուրգի Սբ. Ալեքսանդր Նևսկու մենաստանի Բլագովեշչենսկի եկեղեցում՝ շիրմաքարի վրա արձանագրելով նրա զինվորական կոչումների ամբողջական ցանկը: Սակայն 50 տարի անց այն փոխարինեցին համառոտ գրությամբ՝ «Աստ հանգչում է Սուվորովը՝ ննջեցյալի կտակի համաձայն»: Այսպիսին էր սրբակենցաղ, համեստ ու խոնարհ հավատավոր այրի փառահեղ կյանքը, այսպիսին է բոլոր բարեպաշտ մարդկանց երկրային կյանքը՝ Աստծո խոստմամբ, օրհնություններով ու շնորհներով, օգնություններով լեցուն և հետմահու՝ երկնային արքայությունը ժառանգելու աներեր հույսով:

**Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆ**

# Հին Կտակարանը և հրեական փիլիսոփայությունը

➥ էջ 6

Այս համարը շեշտում է մարդու մահկանացու լինելը և երկրային կյանքի ժամանակավոր բնույթը: Սրանով հանդերձ՝ Հին Կտակարանը ներմուծում է նաև այն գաղափարը, որ կյանքն ու մահը կապված են բարոյական պատասխանատվության հետ: Երկրորդ Օրենքում Աստված ժողովրդին ասում է. «Ես ձեր առջև դրել եմ կյանքը և մահը, օրհնություններն ու անեծքները: Ընտրիր կյանքը, որպեսզի ապրեք դու և քո սերունդը» (Բ Օր. 30:19):

Վստահաբար, հատվածի խոր ընթերցման դեպքում օրհնությունը և կյանքը դադարում են ունենալ միայն երկրային նշանակություն:

Հին Կտակարանի շատ հատվածներում մահացածները նկարագրվում են որպես շեոլ՝ լռության և խավարի ստվերոտ վայր գնացողներ: Օրինակ՝ Ժողովողը նշում է. «Մեռյալները ոչինչ չգիտեն» (Ժող. 9:5):

Մահվան մասին վաղաստվածաշնչյան ըմբռնումը դեռևս չէր պարունակում երկնքի կամ դժոխքի լիովին մշակված ուսմունք: Այնուամենայնիվ, հրեա փիլիսոփաները հետագայում փորձեցին բացատրել, թե արդյո՞ք շեոլը խորհրդանշում է Աստծուց հոգևոր բաժանումը, թե՞ պարզապես գերեզմանը: Այս առումով կարևոր է Սաղմոսաց գրքի հետևյալ հատվածը. «Որովհետև դու չես թողնի իմ անձը մեռյալների աշխարհում» (Սաղմ. 16:10):

Այս հատվածը կարևոր հիմք դարձավ փիլիսոփաների և աստվածաբանների համար, որոնք հավատում էին հոգու անմահությանը:

**Հարություն և հավերժական կյանք:** Հինկտակարանյան հաջորդ գրքերում նույնպես գտնում ենք մարգարեական դրվագներ հարության և հետմահու կյանքի մասին. «Երկրի հողում ննջեցյալներից շատերը կարթնանան. ոմանք՝ հավիտենական կյանքի համար, ոմանք՝ ամոթի և հավիտենական նախատինքի համար» (Դան. 12:2):

Այս հատվածը ժամանակի հրեական մտածողություն ներմուծեց այն համոզմունքը, որ մահը մարդկային գոյության վերջնակետը չէ: Այն ենթադրում է աստվածային դատաստան և հավիտենական կյանքի հնարավորություն:

Հին Կտակարանի և հունական փիլիսոփայության ազդեցությամբ՝ հրեա հայտնի փիլիսոփաներից Փիլոն Ալեքսանդրացին հավատում էր, որ հոգին անմահ է, և մահվամբ հոգին ազատվում է մարմնի սահմանափակումներից: Նա խորհրդանշականորեն մեկնաբանում էր աստվածաշնչյան պատմությունները և պնդում, որ արդար հոգին մահից հետո վերադառնում է Աստծո մոտ. «Մարմինը հոգու բանտն է»: Այս գաղափարն արտացոլվում էր ինչպես պլատոնական փիլիսոփայության, այնպես էլ հրեական մտածողության մեջ:

Ամենաազդեցիկ հրեա փիլիսոփա Մայմոնիդեսը նույնպես հավատում էր, որ անմահությունն է հրաշքներից ամենամեծը: Սա Աստծո ամենաբարձր ու հավերժական պարգևն է, որը տեղի կունենա Արարչի կամքով՝ Մեսիայի գալուստից հետո:

Մայմոնիդեսը, հարության հավատը ներառելով իր «Հավատի տասներեք սկզբունքներ» հայտնի շարքում, գրում է. «Արդարների պարգևն այն է, որ նրանք կարժանանան և կհասնեն այն երանելի կյանքին (գալիք աշխարհին)»:

Հին Կտակարանը հրեական մտքում ձևավորում է նաև մահվան հանդեպ մարդու յուրահատուկ՝ էթիկական վերաբերմունք: Մարդն Աստծուց շնորհ է խնդրում, որ իմանա իր կյանքի ժամանակը և իր կյանքի օրերը հաշվելով ապրի. «Ասա՛ ինձ սակավությունն իմ օրերի և ինձ մի՛ վերցրու օրերիս կեսին...» (Սաղմ. 90:12): Սա նույնն է, ինչ սրբերն էին խնդրում. «Մահվանս օրը աչքերիս առջև ունենալու շնորհ տուր ինձ, Տեր» (Հովհան Ոսկեբերան): Հրեա փիլիսոփաներն այս համարը մեկնաբանել են որպես հիշեցում, որ մարդկային կյանքը սահմանափակ է և հետևաբար՝ պետք է նվիրված լինի իմաստությանը, արդարությանն ու հնազանդությանը Աստծուն:

Եվ վերջապես, իմաստասիրական գրքերից թերևս ամենաակնառու հրահանգը մահվան, մարդու կյանքի ժամանակավոր և հաճույքների ժամանակավրեպ լինելու մասին պարունակում է Ժողովողի գիրքը. «Վախեցիր Աստծուց և պահիր Նրա պատվիրանները, որովհետև սա է մարդն իր ամբողջությամբ» (Ժող. 12:13):

**Եզրակացություն:** Հին Կտակարանն ուժեղ ազդեցություն է ունեցել մահվան և հանդերձյալ կյանքի մասին հրեական փիլիսոփայական գաղափարների վրա: Չնայած վաղաստվածաշնչյան բնագրերում մահը հաճախ նկարագրվում է շեոլում՝ որպես ստվերային գոյություն, ավելի ուշ գրվածքները հույս են ներշնչում հարության, աստվածային արդարության և հավերժական կյանքի նկատմամբ: Հրեա փիլիսոփաները, ինչպիսիք են Փիլոն Ալեքսանդրացին, Սաադիա Գաոնը և Մովսես Մայմոնիդեսը, այս ուսմունքները մեկնաբանել են տարբեր ձևերով՝ համատեղելով աստվածաշնչյան հավատը փիլիսոփայական դատողության հետ:

**Նարեկ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ**
**Սևանի Վազգենյան դպրանոցի**
**Գ լսարանի սան**

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Նարինե Հովհաննիսյան
**Գրանցման վկայական՝** 624
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հեռախոս՝** (010) 517 280
**Էլ. փոստ՝** qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
**web կայք՝**
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
**Ստոր. տպագր.** 15.06.2026 թ.
**Տպաքանակը՝ 915**